Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Թատերգություն
13+

Շիրվանզադե
Ունե՞ր իրավունք
դրամա 4 արարվածով
1902թ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՆՏՈՆ ԲԵԳՄՈՒՐՅԱՆ, հարուստ կալվածատեր և զանազան առևտրական ընկերությունների անդամ, 43 տարեկան:

ՀԵՐՍԻԼԵ, նրա ամուսինը: 24 — 25 տարեկան առողջ, գեղեցիկ կին: Հագնվում է ճաշակով և շքեղ:

ՍՈԼՈՄՈՆ ՍՈՒՐԱԹՅԱՆ, Հերսիլեի հայրը. 52 տարեկան,

ՆԱՏԱԼԻԱ, նրա կինը: 46 տարեկան:

ԱՆՆԱ ԱԼԻՄԲԱՐՅԱՆ, Հերսիլեի ընկերուհին և հասակակիցը,

ՌՈՒԲԵՆ ԱԼԻՄԲԱՐՅԱՆ, Աննայի ամուսինը, 30 տարեկան,

ԻԼԻԱ ՄԱՐՏԻՆԻՉ ՄԱՐՄԱՐՅԱՆ, Անտոն Բեգմուրյանի մոտիկ ազգականն ու մտերիմ բարեկամը, 44 տարեկան:

ՍՈՒՐԵՆ ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ, Անտոն Բեգմուրյանի քեռորդին գործերի կառավարիչը, 29 տարեկան:

ՎԱՐՎԱՌԵ, նրա ամուսինը, 26 տարեկան,

ՍԱՄՍՈՆ, Բեգմուրյանների սպասավորը,

ՎԻՐԺԻՆԵ, նրանց աղախինը:

ԱԼԵՔՈ, նրանց ամառանոցի պահապանը:

ՀՅՈՒՐԵՐ, Առաջին և երկրորդ գործողությունները կատարվում են Բեգմուրյանի ամառանոցում, իսկ երրորդն ու երրորդը նրանց քաղաքային բնակարանում:

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Գեղեցիկ ամառանոցային պարտեզ: Կենտրոնում երկու միմյանց կից բուսած ծառեր խիտ տերևներով: Նրանց ստվերի տակ թեյի սեղան սպիտակ սփռոցով ծածկված, շուրջը եղեգնյա աթոռներ: Խորքի ամբողջ երկայնությամբ երկաթե ցանկապատ, որի մեջտեղում դռներ՝ կանաչ ներկած: Դեպի աջ օրրան (համակ), որի վրա մի բարձ և մի անկազմ գիրք; Ցանկապատից դեն վաղոց, հետո թփերով ծածկված բլուր, հետո միմյանցից բարձր լեռների շարք: Շատ հեռվում մի ձյունագագաթ լեռն, ընդհանրապես վեհ և գեղեցիկ կովկասյան պեյզաժ:

Բեմի աջ կողմը ներկայացնում է պարտեզի շարունակությունը: Այստեղ, ավանսցենայի մոտ դեղնագույն նստարան երկու հոգու համար:

Բեմի ձախ կողմը ներկայացնում է ամառանոցի շինությունը: Գետնից մի քանի աստիճան բարձրությամբ բոլորաձև պատշգամբ, սքողված կանաչ պատատուկով: Դեպի պատշգամբ նայում է շինության ճակատը — երկու դռներ, մեկը մեջտեղում լայն, կամարաձև, մյուսն ավելի խորը — փոքր: Առաջին դռների աջ ու ձախ կողմերում՝ լուսամուտներ:

Պարտեզում ամենուրեք ծաղիկներ ու տրոպիկական բույսեր: Օգոստոսյան կեսօր է: Արեգակի շողերը տեղ-տեղ խաղում են կարմիր աղյուսի փոշով ծածկված գետնի վրա, իսկ ընդհանրապես ծառերի խիտ կանաչը տարածում է թանձր ստվեր:

ՏԵՍԻԼ 1

ՎԻՐԺԻՆԵ, ԱԼԵՔՈ, հետո ՄԱՐՄԱՐՅԱՆ

Վարագույրը բարձրանալիս Ալեքոն ցնցուղով ջրում է աջ կողմի ծաղիկները, ցածր ձայնով երգելով մի ժողովրդական երգ: Ձախ կողմից պատշգամբից իջնում է Վիրժինեն ձեռքին մի մեծ արծաթյա մատուցարան, վրեն սուրճի դատարկ գավաթներ, կարագ, խաշած ձվեր և այլն: Սկսում է դարսել սեղանի վրա: Փոքր ժամանակ երկուսն էլ զբաղված են իրանց գործով:

ՎԻՐԺԻՆԵ. Երգիր, երգիր, էն ա բլբուլները հավաքվել են ծառի վրա ու քեզ են ականջ դնում: (Լռում է) Դե լավ, զահլ մի տանիր, էն աստվածը...

ԱԼԵՔՈ. Յանի յա, քե՞ հինչ, աղջի...

ՎԻՐԺԻՆԵ. Գլուխ ես ցավացնում:

ԱԼԵՔՈ. Յանի յա, խի՞, քի հմա եմ երգո՞ւմ:

ՎԻՐԺԻՆԵ. Բաս չոլերի համար:

ԱԼԵՔՈ. (Հպարտ) Խանըմի հմա:

ՎԻՐԺԻՆԵ. Էն աստվածը... (փռթկալով ծիծաղում է):

ԱԼԵՔՈ. Իա... յանի յա, խի՞ ես ծիծաղում, խանըմը սիրիմ ա: Էն օրն էլ երգում էի գլուխս քաշ, մին էլ տեսամ բալխոնի վրա կայնած մտիկ ա անըմ: Էն ա ուզում էի չվանս հավաքեմ, ամա ասաց. «Երգի, երգի, Ալեքո, լավ ես եգում»: Ես էլ երգեցի, կես մանեթ բաշխեց: (Շարունակում է երգել): Ցանկապատի հետևում երևում է Մարմարյանը: Միջահասակ, գեղեցկադեմ, բարի աչքերով տղամարդ է, որի դեմքը կրում է շվայտ անցյալի հետք: Կաթվածից նրա աջ թևն ու աջ ոտը թուլացել են: Քայլում է թեև ձեռնափայտի օգնությամբ, բայց ժիր:

ՎԻՐԺԻՆԵ. Դե լավ, ձայնդ կտրիր, մարդ է գալիս:

ԱԼԵՔՈ. (Գլուխը բարձրացնելով) Աղա չոլախն է, չվաններս հվաքենք: (Երգելով կամաց-կամաց հեռանամ է դեպի աջ և աներևույթանում):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Դռների մոտից նայելով Ալեքոյի հետևից): Էվալլա, Բայազեթի տեսնոր, ձայնդ անսպառ: (Առաջ է գալիս): Վիրժինե, շուտ ինձ համար բեր սառը կաթ և գելթերյաւն ջուր:

ՎԻՐԺԻՆԵ. Աչքիս վրա, Իլիա Մարտինիչ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ձերոնք ի՞նչ են անում: (Նստում է սեղանի քով փայտը ձեռին, գլխարկը գլխին):

ՎԻՐԺԻՆԵ. Էն ա աղան գալիս է: (Գնում է դեպի ձախ պատշգամբի փոքր դռներով):

Մեծ դռներից դուրս է գալիս Անտոն Բեգմուրյանը: Նա հագած է սև սյուրտուկ, օձիքը ծալած շապիկ, բարակ սև փողկապ: Ձեռում պահած է մի քանի լրագիրներ և հաշվեթղթեր: Նրա հետևից անմիջապես դուրս է գալիս Սուրեն Ֆրանգուլյանը: Դա առողջ, եռանդուն դեմքով երիտասարդ է, որի կերպարանքն արտահայտում է գործնական մարդու ոգի: Հագած է հասարակ պիջակ և երկայն կոշիկներ:

ՏԵՍԻԼ 2

ԱՆՏՈՆ, ՍՈՒՐԵՆ և ՄԱՐՄԱՐՅԱՆ

ԱՆՏՈՆ. (Դռների միջից) Այս անգամ խնդիրդ անտեղի եմ համարում (իջնում է պարտեզ): Այո, Սուրեն, այդ ինձ դուր չի գալիս: (Բարևում է Մարմարյանին բարեկամական անփութությամբ և նստում սեղանի քով, թղթերն ու լրագրերը դնելով սեղանի վրա):

ՍՈՒՐԵՆ. (Համարձակ և կտրուկ) Ներիր, քեռի, ես քեզանից ողորմություն չեմ խնդրում, այլ իմ ծառայության իսկական վարձը: (Հարգանքով ձեռ է տալիս Մարմարյանին և կանգնում սեղանի քով):

Վիրժինեն բերում է սառը կաթ, սիֆոն, և, մի դատարկ բաժակի հետ դնելով Մարմարյանի առջև, հետ է գնում:

ԱՆՏՈՆ. (Տաքանալով) Շատ ծանր է ծառայությունդ այ: Կան կառավարիչներ, որոնք քեզանից երկու անգամ ավելի են ծառայում և երկու անգամ պակաս ստանում: (Սկսում է նախաճաշ անել):

ՍՈՒՐԵՆ. Եթե ես մենակ լինեի ամսական հարյուր ռուբլին էլ ինձ համար շատ էր:

ԱՆՏՈՆ. Աա՛, հինգ երեխա ունես չէ: Ես էլ հենց այդ էի ուզում լսել: Քսանուինը տարեկան հասակում — հինգ երեխա: Ասա խնդրեմ, ո՞վ է մեղավոր, որ դու թեթևամիտ ես:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Բաժակը կիսով չափ լցրել է կաթով. Սուրենին)

Երիտասարդ պարոն, բարի եղեք այդ սիֆոնը սեղմելու:

ՍՈՒՐԵՆ. (Սեղմելով սիֆոնը, լցնում է Մարմարյանի բաժակը): Չէի կարծում, որ երեխաներ ունենալը թեթևամտության նշան է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Էվալլա, կեցցեն ուրեմն ինձ նման ամուրիները:

ԱՆՏՈՆ. Քեզպեսների համար, իհարկե թեթևամտություն է. քսանումեկ տարեկան չկայիր, գնացիր պսակվեցիր, այն էլ մի աղքատ աղջկա հետ: Ի՞նչ ես կարծում, խելքը գլխին մարդը պարտավոր չէ առաջ իրեն նյութապես ապահովել, հետո ամուսնանալ:

ՍՈՒՐԵՆ. (Հագիվ զսպված հեգնությամբ): Իսկ ի՞նչ կհրամայեիր անել խելքը գլխին մարդուն մինչև ամուսնությունը:

ԱՆՏՈՆ. Այն, ինչ որ անում են ամենքը:

ՍՈՒՐԵՆ. Ներիր, քեռի, ես չէի ուզում առողջությունս վտանգի ենթարկել:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Նայելով Սուրենին ցածից վեր ծուռ հայացքով) Ինչպե՞ս ես:

ՍՈՒՐԵՆ. Ներեցեք, իմ խոսքը միայն ֆիզիկական առողջության մասին չէ:

ԱՆՏՈՆ. (Բարկանալով) Սուրեն, գու շատ ես խելքիդ զոռ տալիս: Իմ կարծիքով, այն մարդիկ են իրենց բարոյականությունը վտանգի ենթարկում, որոնք կճեպից դուրս չեկած աշխատում են ճտեր լույս գցել:

ՍՈՒՐԵՆ. (Գունատվելով, սակայն զսպելով իրեն) Քեռի, ես ժամանակ չունիմ վիճելու, պետք է իսկույն վերադառնամ քաղաք: Հրամայիր, ինչ որ ունիս հրամայելու:

ԱՆՏՈՆ. (Զսպելով իրեն) Գնա, ես արդեն բոլոր պատվերներս տվել եմ:

ՍՈՒՐԵՆ. Ցտեսություն: (Գլուխ է տալիս ու գնում):

ԱՆՏՈՆ. Սպասիր: (Սուրենը հետ է նայում): Հիշեցրու կնոջդ, որ առաջիկա կիրակի իմ ամուսնության տարեդարձն է: Միասին եկեք, առավոտից:

ՍՈՒՐԵՆ. Շնորհակալ եմ: (Գնում է եռանդուն քայլերով ցանկապատի դռներով):

ՏԵՍԻԼ 3

ԱՆՏՈՆ ՄԱՐՄԱՐՅԱՆ, հետո ՀԵՐՍԻԼԵ

ԱՆՏՈՆ. (Վերցնելով սեղանի վրայից մի լրացիր) Մարդու արյունն են տակնուվրա անում այս ազգականները:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Խորհրդավոր) Իրենց դառն ճշմարտությամբ:

ԱՆՏՈՆ. Եվ դու համաձա՞յն ես նրա հետ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Կկամենայի չհամաձայնվել (հառաչելով), բայց փաստը շատ ակնհայտ է: (Ցույց է տալիս իր կաթվածահար կողմը):

ԱՆՏՈՆ. Ո՞վ է մեղավոր, որ դու զգույշ չէիր:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Դառն հեգնությամբ) Իսկ դու զգույշ էիր իհարկե: Բայց մի մոռանար, բարեկամս, որ այդ երիտասարդի խոսքը միայն ֆիզիկական առողջության մասին չէր, այլև բարոյական: Եվ ես այժմ դժվարանում եմ վճռել — ով է մեր երկուսից ավելի անբարոյական՝ դո՞ւ թե ե՞ս...

ԱՆՏՈՆ. (Զբաղվում է հաշիվներով) Իհարկե ես, որովհետև կամեցա վերջապես երջանիկ լինել...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ծաղրիր, բայց քո բերանով խոսեց ինքը ճշմարտությունը: Բեմի հետևից լսվում է դաշնամուրի ձայն: Նվագվում է ինչ-որ փոթորկալի եղանակ: Ահ, լսիր, դարձյալ միևնույն եղանակը: Լսո՞ւմ ես, այդ փոթորկալի հնչյունների մեջ ես զգում եմ ինչ-որ դառն բողոք: Բողոք մաքուր, երիտասարդ հոգու կեղտի և ապիկարության դեմ...

ԱՆՏՈՆ. (Հաշիվները դնելով սեղանի վրա, նայում է նրան սուր հայացքով) Ինչպես տեսնում եմ, սրտիդ վերքը դեռ չի բուժվել:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ահ, հերիք է, աստված սիրես, վերքը վաղուց է

մոռացված: Այո, ես էի ուզում քո օրն ընկնել, բայց կաթվածն ինձ ազատեց: Ես այնքան հիմար էի, որ երևակայում էի, թե աշունը կարող է գարնան հետ միանալ և կազմել ներդաշնակություն: Հավանում էի Հերսիլեին, այո, այս քեզ հայտնի է: Բայց ինքը բնությունը սանձահարեց իմ հանդուգն փափագը — ամուսնանալ նրա հետ: Եվ ես այժմ շատ ուրախ եմ իմ դրությանը: Դաշնամուրի նվագումն ընդհատվում է: Ահ. ընդհատվեց... Փույթ չէ, վաղը նորից նույնը կնվագի:

ԱՆՏՈՆ. Ուրեմն, քո կարծիքով, ես երջանիկ ամուսին չե՞մ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ոչ, և երբեք չես կարող երջանիկ ամուսին լիներ: Հերիք է, Անտոն, ինչքան կույր եղար, բաց արա աչքերդ և տես ինչ անդունդ կա քո և նրա մեջ: Ով էիր դու, որ ամուսնացար, քառասունին մոտեցող մի թերմաշ, որի կյանքի սերն արդեն հավաքվել էր, թթու թանն էր մնացել, իսկ նա տասնութ տարեկան երեխա էր: Էվալլա, դու կին չէիր ուզում, այլ զարդ, որով կարողանայիր պարծենալ ուրիշների մոտ:

ԱՆՏՈՆ. (Աշխատելով հեգնել) Կեցցես, երևելի հոգեբան ես: Բավական է, եթե ես թույլ եմ տալիս քեզ ինձ հետ համարձակ խոսելու, այս դեռ չի նշանակում, թե դու իմ համբերությունը պիտի հարստահարես քո հիմար դատողություններով:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ներիր, ես հափշտակվեցի: Այդ երիտասարդի խոսքերը տակնուվրա արին իմ մտքերը: Լռենք, ահա գալի ս է նա...

ՀԵՐՍԻԼԵ. (Դուրս է գալիս ձախ կողմի առաջին դռներից, նա մատների ծայրերով բռնած է մի թիթեռնիկ, որին նայում է ուշադիր):

Անտոնը տեսնելով Հերսիլեին զվարթանում է, Մարմարյանը տեղից բարձրանալով, գլուխ է տալիս ու նորից նստում, գլխարկը դնելով քովի դատարկ աթոռի վրա.

ՀԵՐՍԻԼԵ. Բարով, Իլիա Մարտինիչ, (Մոտենում է) Նայեցեք, ի՞նչ սիրուն թիթեռնիկ է, ի՞նչ քնքուշ գլխիկ ունի, ի՞նչ տարօրինակ թևեր՝ մեկը սև, մյուսը սպիտակ, բնության կապրիզներից մեկը: (Դառնում է Անտոնին): Առհասարակ ես թիթեռնիկներ չեմ սիրում, բայց այս մեկին բռնեցի: Նա թռչկոտում էր լուսամուտիս վրա, դիպչելով ապակիներին: Իսկ ես նրան զրկեցի ազատությունից:

ԱՆՏՈՆ. Լավ բան չես արել:

ՀԵՐՍԻԼԵ. Այո՞, զրկելով նրան ազատությունից: (Թախծալի ժպտում է): Ճիշտ ես ասում: Իսկույն: (Մոտենում է ծառերին և թիթեռնիկը բաց թողնում նրանց հետևում) Գնա, բախտավոր արարած, մի օր ապրիր, բայց ազատ ապրիր:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Ամբողջ ժամանակ թաքուն դիտում է նրան և մերթընդմերթ Անտոնին) Արծիվը թևավորվում է...

Իսկ ի՞նչ են անում իմ թիթեռնիկները, Հերսիլե:

ՀԵՐՍԻԼԵ. (Վայրկենաբար տխրելով) Օխ, մի հարցնիր. Այսօր նրանք ուղղակի անտանելի են: Մեկին հանգստացնում եմ, մյուսն է լալիս...

(Վիրժինեն բերում է սրճամանը, դնում Հերսիլեի առջև և գնում):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Հետո երրորդը, և այն ժամանակ սկսվում է սքանչելի տրիոն: Էվալլա, իսկ իմ սալոնում տիրում է պոետիկական անդորրություն:

ՀԵՐՍԻԼԵ. Ախ, Իլիա Մարտինիչ, երբեմն ես նախանձում եմ այն մարդկանց, որոնք ընտանեկան հոգսերից ազատ են:

ԱՆՏՈՆ. Դու այնպես ես ասում «ընտանեկան հոգսեր», որ կարծես շատ ես ծանրաբեռնված նրանցով: Փառք աստծու, Իլիան տան մարդ է, տեսնում է ինչպես եմ քեզ պահում:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, Իլիա Մարտինիչին ամեն բան հայտնի է…

(Մարմարյանն ու Անտոնը հայացքներ են փոխանակում):

(Դնելով ամուսնու առջև մի գավաթ սուրճ) Իլիա Մարտինիչ, գուցե այսօր բացառություն անեք և մի գավաթ սուրճ խմեք:

ՄԱՐՄԱՐՅԱՆ Եթե ուզում եք ինձ պատժել — ուրախությամբ կխմեմ:

ՀԵՐՍԻԼԵ. Ուրեմն, արգելված է անպայման: (Ածում է իր համար մի գավաթ սուրճ):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Անպայման և ամեն խմիչք, բացի կաթից:

ՀԵՐՍԻԼԵ, Ես կարծում եմ, այդ շատ ձանձրալի պիտի լինի տղամարդու համար:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Այո, մանավանդ ինձ համար, ես մի ժամանակ շատ էի սիրում սև սուրճը և հաճախ խմում էի սառցրած շամպայնի հետ անանսով:

ՀԵՐՄԻԼԵ. Սուրճը շամպայնի հե՞տ — առաջին անգամն եմ լսում: Պետք է փորձել:

ԱՆՏՈՆ (Զբաղված հաշվեթղթերով) Այդ շատ վնասակար խմիչք է:

ՀԵՐՍԻԼԵ. Դու ամեն բան վնասակար ես համարում, սուրճն առանց կաթի, ծխելը, գիշերներն ուշ քնելը, ընթրելը:

ԱՆՏՈՆ. Այդ բոլորից ես վաղուց եմ կշտացել:

ՀԵՐՍԻԼԵ. (Հեգնորեն ծիծաղելով) Կշտացել ես…

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Անտոնը մի փոքր զրպարտեց նրան: Մեր ընկերական շրջանում նա հայտնի է եղել իր չափավորությամբ և ժուժկալությամբ:

ՀԵՐՍԻԼԵ. Այո՛, և ճաշակով, չէ:

ԱՆՏՈՆ. (Հաշվելով) Երկու հարյուր հիսուն և յոթանասուն — երեք հարյուր քսան ռուբլի, միայն պատերի պաստառների համար թանկ է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ես օրից օր ավելի ու ավելի համոզվում եմ, որ Անտոնի ճաշակը մրցակից չունի:

ՀԵՐՍԻԼԵ. Ախ, հին կավալեր, դարձյալ կոմպլիմաններ….

ԱՆՏՈՆ. Յոթ Հարյուր ռուբլի ներկարարին, տնաքանդություն է...

ՀԵՐՍԻԼԵ. (Դժկամակ) Թող այդ հաշիվները գոնե մի կես ժամ:
(Մարմարյանին) Առավոտից սկսած մի գլուխ այդ հաշիվներով է զբաղված:

ԱՆՏՈՆ. Եթե ես իմ հաշիվներով չզբաղվեի, դու էլ առավոտից ինձ չէիր ձանձրացնի քո դաշնամուրի զնգզնգոցով: Ուրեմն քվիթ ենք…

ՀԵՐՍԻԼԵ. Ուրախությամբ կազատեի քեզ իմ դաշնամուրից, եթե իրավունք տայիր: Ի՞նչ անեմ, որ համառում ես…

ԱՆՏՈՆ. Ա՛ա, դարձյալ հին երգը նոր եղանակով: Հերսիլե, դուրս բեր գլխիցդ այդ ցնորքը: Դու երբեք երաժշտուհի չես կարող դառնալ: Ականջ մի դնիր ուրիշների խոսքին: Նրանք քեզ շողոքորթում են:

ՀԵՐՍԻԼԵ. Ես ուրիշներին չեմ լսում, այլ իմ հոգու ձայնին:

ԱՆՏՈՆ. (Հեգնությամբ): Եվ այդ ձայնն ասում է, որ դու տաղանդ ես:

ՀԵՐՍԻԼԵ. Չգիտեմ: Զգում եմ միայն, որ եթե չշարունակեմ իմ կրթությունը, միշտ պիտի դժբախտ լինեմ...

ԱՆՏՈՆ. (Մի քանի վայրկյան լռելուց հետո, հաշիվները հեռացնում է իրենից) Հերսիլե, լսիր ինձ, թող լսի և մեր բարեկամը: Դու խելոք կին ես, կարող ես սառն դատել: Դիցուք թե ես քեզ մի քանի տարի ազատություն տվեցի, և դու դարձար տաղանդավոր դաշնակահար, թեկուզ համաշխարհային աստղ, որի մասին ավելի քան կասկածում եմ: Իսկ ես ո՞ւր գնամ, ես ի՞նչ անեմ: Պիտի վերցնեմ նոտաներիդ կապո՞ցը հետևից ընկած թափառեմ քաղաքից քաղաք իբրև արտիստուհու ամուսի՞ն: Պիտի ծաղրի ու ծիծաղի առարակա դառնում իբրև մի կնոջ պոչ: Ոչ, Հերսիլե, ինչ ուզում ես պահանջիր ինձանից, միայն ոչ այդ, որովհետև ես հարգում եմ անձնասիրությունը, ինքնուրույնաությունն ու անկախությունը:

ՀԵՐՍԻԼԵ (Ոտքի է կանգնել). Իսկ ես ի՞նչ եմ քո կարծիքով: Ինքնասիրությունից և ինքնուրույնությունից զուրկ մի ողորմելի Էակ:

ԱՆՏՈՆ. Դու կին ես:

ՀԵՍԻԼԵ. Այսինքն, քո կարծիքով, ոչ առանձին մի անհատ, ոչ մի ամբողջություն իր սեփական ձգտումներով ու զաղափարներով:

ԱՆՏՈՆ. Ես քեզ հարյուր անգամ ասել եմ և կրկնում եմ, որ կինը ծնված է միայն ամուսին և մայր լինելու համար: Ուրիշ կոչում կնոջ համար ես չեմ ընդունում:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Ոտքի է կանգնել և հեռվից լսում է, հանդիմանորեն) Անտոն...

ԱՆՏՈՆ. (Գրգռված) Ի՞նչ ես կամենում...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ոչինչ, հետո կասեմ...

ՀԵՐՍԻԼԵ. Որքան, ուրեմն ստոր է քո գաղափարը կնոջ մասին: (Հուզված անցնում է ցանկապատի կողմ և նայում հեռավոր լեռներին:

ԱՆՏՈՆ. (Զայրանալով) Ստոր... Հերսիլե, մի հափշտակվիր մոդային գաղափարներով, նրանք պերճախոս են միայն տեսականապես, իսկ գործնական կյանքի համար փուչ են: Կնոջ համար չի կարող լինել ավելի վեհ, ավելի սուրբ կոչում, քան այն, ինչ որ սահմանված է բնությունից: Դուրս բեր գլխիցդ ցնորքները:

ՀԵՐՍԻԼԵ. Այդ դուք, տղամարդիկդ եք, որ ցնորք եք համարում կնոջ ինքնուրույնությունը: Դուք եք նրան ստորացրել մինչև այդ աստիճան; Կինը նույնպես անհատ է... (Ցանկապատի հետևում երևում է Աննա Ալիմբարյանը):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ո՞վ որ գալիս է:

ՏԵՍԻԼ 4

ՆՈՒՅՆՔ և ԱՆՆԱ

ԱՆՆԱ. (Թուխ-թուխ դեմքով կին է, պարզ, բայց ճաշակով հագնված, ձևերն ու շարժումները ազատ են, համարձակ, սակայն ոչ զերծ կանացի քնքշությունից, մեջքին կապած է բարակ գեղեցիկ գոտի, որի վրա քարշ արած է շատ փոքրիկ արծաթյա դաշույն: Հասնելով դռներին, կանգ է առնում, նայում է դեպի ներս) Թույլ տվեք հարցնել՝ ա՞յս է Բեգմուրյանների ամառանոցը:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Այս է:

ՀԵՐՍԻԼԵ. (Չճանաչելով) Ո՞ւմն եք կամենում:

ԱՆՆԱ. (Վազում է ներս) Հերսիլե:

ՀԵՐՍԻԼԵ. (Ճանաչելով) Աննա... Հազիվ ճանաչեցի... (Գրկախառնվում են և համբուրվում):

ԱՆՆԱ. Վերջապես, յոթ տարի չտեսնվելուց հետո:

ՀԵՐՍԻԼԵ. (Ուրախ) Այո, յոթ տարի: Այդ որտեղի՞ց, ինչպե՞ս, ե՞րբ: Ահա սյուրպրիզ... Նստիր... Ահ, ներկայացնում եմ, ամուսինս և նրա բարեկամը: Անտոն, ահա սա է իմ ընկերուհի Աննան, որի մասին այնքան խոսել եմ ձեզ հետ: (Անտոնը և Մարմարյանը հարգանքով գլուխ են տալիս Աննային): Ե՞րբ ես եկել:

ԱՆՆԱ. Երեկ երեկոյան: Այսօր իմացա, որ դու այստեղ ես, շտապեցի գալ քեզ տեսնելու (նստում են):

ՀԵՐՍԻԼԵ. Վերջին ամիսները քեզնից նամակներ չէի ստանում, սաստիկ բարկացած էի վրեդ: Բայց այս մասին հետո, դեռ նախաճաշիր:

ԱՆՆԱ. Շնորհակալ եմ, ես արդեն նախաճաշել եմ մորաքրոջս մոտ:

ՀԵՐՍԻԼԵ. Դու նրա մո՞տ ես իջևանել:

ԱՆՆԱ. Ախ ոչ, ամուսինս չկամեցավ: Մենք իջևանել ենք հյուրանոցում:

ՀԵՐՍԻԼԵ. Դո՞ւ, հյուրանոցո՞ւմ: Իմ ամառանոցը թողած: Այդ աններելի է: Անտոն, հրամայիր Սամսոնին, որ իսկույն գնա և Աննայի իրերը բերի:

ԱՆՏՈՆ. Ուրախությամբ (Ուզում է գնալ):

ԱՆՆԱ. Ոչ, ոչ, շնորհակալ եմ: Ռուբենը չի համաձայնվիլ, երբեք: Զուր մի անհանգստանաք: (Անտոնը նստում է և. շարունակում հաշիվներով զբաղվել):

ՀԵՐՍԻԼԵ. Ռուբենը, քո ամուսինն և իմ նախկին հարևանը: Քանի տարի է ես նրան չեմ տեսել: Ես համարյա թե երեխա էի, երբ նա հեռացավ Կովկասից: Շնորհավորում եմ, սիրելիս, հուսով եմ, որ երջանիկ ես:

ԱՆՆԱ. Ես նույնպես շնորհավորում եմ, թեև նամակներով հարյուր անգամ իրարու շնորհավորել ենք: (Անտոնին):

Դուք պետք է շատ երջանիկ լինեք, որ ունիք Հերսիլեի պես ամուսին:

ԱՆՏՈՆ. Այո տիկին, ես երջանիկ եմ: (Նստում է և զբաղվում հաշիվներով):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ասացեք խնդրեմ, տիկին, դուք հանգուցյալ բժիշկ Խորենյանի դուստրը չե՞ք արդյոք:

ԱՆՆԱ. Այո, պարոն, դուք նրան ճանաչո՞ւմ էիք:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ինչպես չէ, լավ ծանոթներ էինք: Նա շատ ուսումնասեր մարդ էր, գիտեր գրեթե բոլոր եվրոպական լեզուները:

ԱՆՆԱ. Այո, նա շատ լուսավոր մարդ էր: նա ինձ ավանդել է անպատճառ բարձրագույն ուսում ստանալ:

ՀԵՐՍԻԼԵ. (Հառաչելով) Եվ քեզ կհաջողվի կատարել նրա ավանդը: Աննա, քեզ ամեն բան կհաջողվի, դու ունիս կամքի ուժ….

ԱՆՏՈՆ. Հինգ հազար երեք հարյուր ռուբլի հյուսների... Սարսափելի է... (Ձգում է հաշիվներն և լրագիր վերցնում:)

ԱՆՆԱ. Գիտես Հերսիլե, ես թողեցի այս տարի մանկավարժական կուրսերը: Այժմ պատրաստվում եմ մտնել Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտը...

ԱՆՏՈՆ. (Նկատելու չափ հեգնորեն) Կնշանակե՝ դուք ուզում եք լինել ինքնագլուխ, անկախ կին... Էմանսիպասոիոն….(Հերսիլեն նայում է նրան հանդիմանորեն):

ԱՆՆԱ. (Կտրուկ) Չեք սխալվում, պարոն Բեգմուրյան, ես ուզում եմ լինել անկախ, և իմ ամուսինն ինձ չի արգելում:

ԱՆՏՈՆ. Այդ, իհարկե, գովելի է: Երևի, երեխաներ չունիք…

ԱՆՆԱ. Առայժմ ոչ: Եվ եթե լինեն էլ, չեն խանգարի:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Իսկ ձեր ամուսինն ինչո՞վ է պարապում:

ԱՆՆԱ. Ճարտարապետ է:

ԱՆՏՈՆ. Այդ լավ է, ես կխնդրեմ նրան կազմել իմ մյուս տան պլանը :

ԱՆՆԱ. Նա առայժմ պատվերներ չի ընդունում: Դեռ. կատարելագործվում է յուր արհեստի մեջ:

ԱՆՏՈՆ. (Վերցնելով սեղանի վրայից հաշիվները) Էհ, ինձ ներեցեք, տիկին, մի քանի կարևոր նամակներ պիտի գրեմ: (Գնում է պատշգամբ առաջին դռներով):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Երկու ընկերուհիներ յոթ տարի չտեսնվելուց հետո խոսելու շատ բան կունենան: (Հերսիլեին) Ձեր թույլտվությամբ գնում եմ անտառի կողմի պատշգամբը:

ՀԵՐՍԻԼԵ. Հրամայեցեք Սամսոնին, որ ձեր բազկաթոռն այնտեղ տանի: (Մարմարյանը գլուխ է գալիս և անցնում պատշգամի երկրորդ դռներով):

ՏԵՍԻԼ 5

ՀԵՐՍԻԼԵ և ԱՆՆԱ

Վիրժինեն ներս է մտնում և սկսում սեղանի իրերը ժողովել ու տանել, հետաքրքրված դիտելով Աննային:

ԱՆՆԱ. (Աչքերով ուղեկցել է նախ Անտոնին, ապա Մարմարյանին): Այդ պարոնը ամուսնուդ ազգակա՞նն է:

ՀԵՍԻԼԵ. Մորաքրոջ որդին է:

ԱՆՆԱ. Ողորմելի մարդ է:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, նա հիվանդ է:

ԱՆՆԱ. Տեսնում եմ և գիտեմ... Եվ որքան մեզանում շատացել է այդ տեսակ հիվանդների թիվը: Ինչո՞ւ ես ժպտում, այժմ ես կես բժիշկ եմ, գիտեմ շատ հիվանդությունների հանցավոր պատճառը: (Սպասելով, որ Վիրժինեն հեռանա) Հերսիլե (Մոտենում է ու ձեռը բռնում) աչքերիս նայիր: Դու բախտավո՞ր ես:

ՀԵՐՍԻԼԵ. Շփոթված: Ինչո՞ւ համար ես հարցնում:

ԱՆՆԱ. Որովհետև դու քո նամակներում ամենազգույշ կերպով այդ մասին լռում էիր, մինչդեռ ես իմ մասին ոչինչ չէի թաքցնում: Այժմ դու պետք է բոլորը պատմես, հասկանո՞ւմ ես, բոլորը:

ՀԵՐՍԻԼԵ. (Ցուցամատը հանդիմանաբար շարժելով) Աննա, ես զգում եմ, որ նա քեզ դուր չեկավ:

ԱՆՆԱ. Նա նման է մի հասարակ վաճառականի... Բայց ասա, ինչպե՞ս պատահեց, որ դու նրան ընտրեցիր կյանքիդ ընկեր... Դու ինձ այդ մասին գրեթե ոչինչ չես գրել: (Ցույց է տալիս աջ կողմի ավասցենայի մոտի նստարարանը) Նստենք այստեղ, և պատմիր: Դու նրան լա՞վ էիր ճանաչում, երբ ամուսնացար (նստում են):

ՀԵՐՍԻԼԵ. Ես նրան բոլորովին չէի ճանաչում այն ժամանակ...

ԱՆՆԱ. (Զարմանալով) Ի՞նչ, դու ուրեմն ամուսնացել ես նրա հարստության հետ: Դու, որ միշտ խոսում էիր սիրո մասին, դու, հոգով բանաստեղծդ:

ՀԵՐՍԻԼԵ. (Թեթև հառաչելով) Լսիր, Աննա, քանի որ դու այդպես հետաքրքրվում ես — կպատմեմ: Ես տասնութ տարեկան չկայի, երբ, հիշո՞ւմ ես, ավարտեցինք գիմնազիան: Դու գնացիր եղբորդ մոտ արտասահման, իսկ ես մտա կյանքի մեջ... Ամբողջ մի ձմեռային սեզոն ես բաց չէի թողնում ոչ մի բազմամարդ պարահանդես, բարեգործական ներկայացում, մանավանդ ոչ մի երաժշտական երեկույթ կամ ցերեկույթ: Դու գիտես, որ ես երաժշտության սիրահար եմ...

ԱՆՆԱ. Սիրահար: Դու ունիս երաժշտական տաղանդ անգամ: Բայց այդ մասին հետո: Շարունակիր, շարունակիր...

ՀԵՐՍԻԼԵ. Ինձ համար, իհարկե, հաճելի էր պտտել հասարակության մեջ: Ես կամաց -կամաց սկսում էի ըմբռնել կյանքի իմաստը: Ծանոթ երիտասարդների թիվը մեծ էր: Ոմանք մինչև անգամ անտարբեր չէին դեպի ինձ:

ԱՆՆԱ. Իսկ դու անուշադիր սավառնում էիր երկնքում…

ՀԵՐՍԻԼԵ. Համենայն դեպս, ինձ համար տղամարդը դեռ գոյություն չուներ: Հափշտակված էի երաժշտությամբ: Մի երեկո իմ ծանոթների շրջանում տեսա Բեգմուրյանին: Ամբողջ երեկո նա պտտում էր շուրջս և աշխատում գրավել ինձ: Շրջապատողներիս շարքում նա աչքի չէր ընկնում իր արտաքինով: Իսկ ձևերն անտաշ էին: Նա ճաշակով հագնվել անգամ չգիտեր: Նոր հագուստը նրա վրա նոր չէր երևում: Մի բան ինձ համար պարզ էր, այն է, որ հայրս նրան շատ էր հավանում: Ինչևիցե, անցավ ձմեռը, գարունը: Ամառը մենք ջրերումն էինք, հայրս բժշկվում էր: Ես, իհարկե, Բեգմուրյանին մոռացել էի, սակայն նա ինքը հիշեցրեց յուր մասին: Մի օր մորս հետ զբոսնում էինք, հանկարծ նա մեր առաջը դուրս եկավ ժպտալով, ուրախ: Այնուհետև նա ամեն օր մեր տանն էր: Վերջապես ի՞նչ երկարացնեմ, չանցավ մի ամիս, և ես դարձա տիկին Բեգմուրյան: Եվ ահա առաջիկա կիրակի լրանում է իմ ամուսնության վեցերորդ տարին: Այս է իմ ամբողջ ռոմանը:

ԱՆՆԱ. Ուրեմն, այնուամենայնիվ, վերջ ի վերջո դու նրան հավանեցի՞ր:

ՀԵՐՍԻԼԵ. (Դրականապես) Ոչ: Թե ինչու տվեցի համաձայնությունս, չգիտեմ: Ես, իհարկե՝ ազատ էի ասելու «այո» կամ «ոչ»: Եվ ես երբեք չեմ մոռանա մի բան, այն օրը, երբ տվեցի դրական պատասխան, ինձ համար անտանելի օր էր: Ես տեսնում էի, որ եթե մերժեմ — պիտի չարաչար վշտացնեմ մորս: Նա ինձ չէր ստիպում կամ թախանձում, բայց լուռ ակնածությամբ լի հայացքներով հալածում էր: Միևնույն ժամանակ, ես խղճում էի Անտոնին: Կարճ միջոցում նա սիրահարվել էր ինձ վրա խելագարի պես: Ախ, Աննա, ծանր զգացում է տղամարդին խղճալը, մանավանդ, երբ այդ տղամարդին ամենքը գովում են: Ես տեսնում էի, որ ինքս իմ առջև կեղծում եմ. ինքս գիտակցաբար խաբում եմ իմ հոգու ձայնին: Բայց և այնպես, կամքի ուժ չունեցա մի անգամ արտասանած խոսքս հետ վերցնելու: Նույնիսկ պսակի երեկո, երբ քահանան երրորդ անգամ հարցրեց «համաձայն ես». ես մտածեցի, «դեռ ուշ չէ, դեռ կարող եմ հետ կանգնել»: Բայց նայեցի մորս ուրախ դեմքին, Անտոնի երջանիկ երեսին, Աննա, և լեզուս կաշկանդվեց: Ես ոչինչ չասացի, միայն գլուխս թեքեցի կրծքիս: Եվ այդ վայրկյանին մարմնովս անցավ մի տարօրինակ, մի սոսկալի սարսուռ Աննա: (Սեղմում է Աննայի ձեռքը):

ԱՆՆԱ. Ա՜ա, սարսուռ: (Նայում է Հերսիլեի աչքերին խորհրդավոր) Հերսիլե, ես վախենում եմ քո ապագայի մասին:

ՀԵՐՍԻԼԵ. (Երեսը ձեռներով ծածկելով) Ոչ, ոչ, Աննա, մի ասա այդ բանը, մի ասա, Անտոնը լավ մարդ է... (վեր է կենում):

ԱՆՆԱ. Գուցե լավ մարդ է, բայց դու գոհ չես քո վիճակից: Հերսիլե, իսկ այդ վտանգավոր դրություն է կնոջ համար:

ՀԵՐՍԻԼԵ. Լռիր, բավական է, լսում ես, ես... ես... դժբախտ չեմ: Այժմ պատմիր քո մասին: Աննա:

ԱՆՆԱ, Իմ պատմությունը շատ կարճ է: Ես վճռել եմ ձեռք բերել բարոյական և նյութական անկախություն, որպեսզի մեր ամուսնական կյանքի կշիռը չկորցնի իր հավասարությունը:

ՀԵՐՍԻԼԵ. Հասկանում եմ միտքդ, Աննա, որքա՜ն խելոք ես, որքան հեռատես.... Ես այժմ այն համոզմունքի եմ, որ անբախտ է այն կինը, որ իր ամուսնուց բարերարված է զգում իրեն…

Ցանկապատի հետևում երևում է Ռուբեն Ալիմբարանը: Նա նրբակազմ է, փոքր ինչ գունատ, բայց առողջ երիտասարդ է մտախոհ դեմքով: Հագած է մոխրագույն պիջակ, նույն գույնի պանթալոն, սպիտակ ժիլետ: Ձևերը կիրթ են, սակայն ներվային և հապճեպ: Մինչև ցանկապատի դռներից մտնելը, քանի մի վայրկյան դիտում է ամառանոցի շրջակայքը:

ԱՆՆԱ. Այդ ի՞նչ ես կորցրել, որ փնտրում ես: Ռուբեն:

ՏԵՍԻԼ 6

ՆՈՒՅՆՔ և ՌՈՒԲԵՆ ԱԼԻՄԲԱՐՅԱՆ

ՌՈՒԲԵՆ. Մի մանկական դառն հիշատակ: (Տեսնում է Հերսիլեին, հեռվից գլխարկը վերցնում է ու մոտենում):

ԱՆՆԱ. Կարո՞ղ ես ասել Ռուբեն, որ այս գեղեցկուհին այն փոքրիկ, նիհար ու դեղնած աղջիկն է...

ՌՈՒԲԵՆ. (Սեղմելով Հերսիլեի ձեռը) Որն ամեն անգամ ինձ վրա ձյունի գնդակներ էր արձակում գավաթում:

ՀԵՐՍԻԼԵ. Երբ գալիս էիք իմ եղբոր հետ դաս սովորելու: Հիշում եմ: Նստեցեք խնդրեմ: Այն ժամանակ դուք ինձ բարկացնում էիք: Գիտե՞ս, Աննա նա ինչ էր անվանում ինձ: (Ռուբենը նստում է Հերսիլեից հետո):

ԱՆՆԱ. Լսել եմ. «Փոքրիկ նապաստակ»: Որովհետև ամեն անգամ երաժշտության ուսուցիչը գալիս՝ դու թաքնվում էիր դաշնամուրի հետևում, ինչպես նապաստակը թփի տակ է որսորդին տեսնելիս: Զարմանայի չէ՞, Հերսիլե, որ առաջ այնպես փախչում էիր երաժշտությունից, հետո սիրահարվեցիր:

ՀԵՐՍԻԼԵ. (Ռուբենին) Այն ի՞նչ մանկական հիշատակի մասին էր ձեր խոսքը:

ՌՈՒԲԵՆ. Մանուկ ժամանակս, երբ մի ամառ ծնողներիս հետ այստեղ էինք, մի անգամ ահա այն թմբից գլորվել եմ: (Նայելով շուրջը): Այն ժամանակ այս տեղերն ամայի էին:

ԱՆՆԱ. (Մերթ անցուդարձ է անում, մերթ կանգ առնում) Իսկ այժմ քո գլորված տեղում բուսել է մի շքեղ ամրոց: Տես, որ նրա կախարդուհին չդյութի քեզ...

ՀԵՐՍԻԼԵ. Դու անուղղելի ես, Աննա... Ահա և ամուսինս…

ՏԵՍԻԼ 7

ՆՈՒՅՆՔ, ԱՆՏՈՆ և ՄԱՐՄԱՐՅԱՆ

Անտոնը և Մարմարյանը դուրս են գալիս միաժամանակ, առաջինը՝ պատշգամբի առաջին, երկրորդը՛ երկրորդ դռնից:

ՀԵՐՍԻԼԵ. (Անտոնին) Դու վերջացրի՞ր գործդ:

ԱՆՏՈՆ. (Իջնելով պարտեզ) Այո:

ՀԵՐՍԻԼԵ. Ուրեմն կարող ենք այժմ զբոսնել:

ԱՆՏՈՆ. Բայց թույլ տուր նախ ծանոթանամ մեր հյուրի հետ:

ՌՈՒԲԵՆ. (Մոտենում է և Անտոնին ձեռ է տալիս) Ալիմբարյան: Եթե չեմ սխալվում ձեզ հանդիպել եմ արտասահմանում:

ԱՆՏՈՆ. (Բավական անտարբեր) Շատ կարելի է…

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Բարևելով) Գուցե և մեր հյուրանոց:

ՌՈՒԲԵՆ. Այո և ձեզ երկուսիդ միասին, Փարիզում:

ՀԵՐՍԻԼԵ. Աննա, այժմ ես կարող եմ ցույց տալ քեզ մեր ամառանոցի շրջակայքը: (Ռուբենին) Եվ ձեզ, եթե կամենաք զբոսնել:

ՌՈՒԲԵՆ, Ուրախությամբ:

ԱՆՏՈՆ. Շոգ է բավական:

ՀԵՐՍԻԼԵ. (Կատակով) Քեզ համար միշտ կամ շոգ է կամ ցուրտ: Բայց պայմանով, Աննա, որ դուք այսօր մեզ մոտ ճաշեք: (Ռուբենին) Հուսով եմ, որ չեք մերժի: (Ռուբենը համաձայնվելով գլուխ է տալիս):

ԱՆՆԱ. (Մոտեցել է ցանկապատին և դիտում է հեռուն) Ի՜նչ գեղեցիկ շրջակայք ունի ձեր ամառանոցը: Հերսիլե, դու երևի ամեն օր զբոսնում ես:

ՀԵՐՍԻԼԵ. Ոչ ես շատ քիչ եմ զբոսնում:

ԱՆՆԱ. Ինչո՞ւ:

ՀԵՐՍԻԼԵ. Մոտիկ տեղերում զբոսնել չեմ սիրում, իսկ հեռու գնալու համար ընկերակից չունեմ:

ԱՆՆԱ. (Մոտենալով բեմի կենտրոնին) Իսկ պարոն Անտո՞նը:

ՀԵՐՍԻԼԵ. Օ, նա շատ ծույլ է զբոսնելում:

ԱՆՏՈՆ. Ծույլ է: Դու հարթ տեղերը թողած, սիրում ես թռչկոտել ժայռերի վրա և ինձ էլ ստիպել որսորդական շան պես քեզ հետևել: Իհարկե կծուլանամ:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, ես սիրում եմ ժայռերը, լեռները, խոր ձորերն ու մթին անդունդները: (Դեպի պատշգամբ): Վիրժինե (Աննան մոտենում է նամակին):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Մեկուսի) Խոր ձորերը, մթին անդունդները, երիտասարդություն, երիտասարդություն: (Վիրժինեն գալիս է):

ՀԵՐՍԻԼԵ. (Վիրժինեին) Բեր այստեղ գլխարկս ու հովանոցս: (Վերժինեն գնում է):

ԱՆՆԱ. (Վերցրել է նամակի վրայից գիրքը և նայում է վերնագրին) Բարոյականություն, թե նախապաշարմունք: Հերսիլե, դո՞ւ ես կարդում այս գիրքը:

ՀԵՐՍԻԼԵ. Այո:

ԱՆՆԱ. (Գիրքը դնում է իր տեղը:) Հետաքրքրական է: (Վիժինեն բերում է Հերսիլեի գլխարկն ու հովանոցը):

ՀԵՐՍԻԼԵ. (Գլխարկը դնելով) Ես պատրաստ ես: Գալի՞ս ես, թե չէ:

ԱՆՏՈՆ. Ինձ ներիր: Ես բարվոք եմ համարում Իլիայի հետ նարդի խաղալ, քան թափառել արեգակի տակ: Վիրժինե, բեր այստեղ նարդին: (Վիրժինեն գնում է: Հերսիլեն դժկամության նշան է անում):

ՀԵՐՍԻԼԵ. Մենք երկար չենք զբոսնի Աննա տուր թևդ: (Առնում է թևը) Ահա այսպես: Ես հիշեցի մեր անցյալը և դարձյալ զգացի ազատություն: Աննա, դու չես կարող երևակայել, թե որքան եմ ուրախ քո գալուն: (Գնում են ուրախ զրուցելով: Ռուբենը գլուխ է տալիս Անտոնին ու Մարմարյանին ու հետևում է նրանց):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Աչքերով ուղեկցել է Հերսիլեին, ապա դառնում է Անտոնին) Ինչո՞ւ չգնացիր նրանց հետ:

ԱՆՏՈՆ. Ծուլանում եմ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Խորհրդավոր) Իսկ այդ Ալիմբարյանը չի ծուլանա և ամեն տեղ իր կնոջը կհետևի:

ԱՆՏՈՆ. Դարձյալ նույնը:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Դարձյալ և միշտ պիտի կրկնեմ, կամ ժողովիր բոլոր ուժերդ և դարձիր կենսասեր ինչպես Հերսիլեն, կամ զսպիր նրա մեջ կենսասիրության հուրը:

ԱՆՏՈՆ. Ես ծեր չեմ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ոչ. դու նրա համար ծեր ես թե՛ մարմնով և թե հոգով, (Վիրժինեն բերում է նարդին):

ԱՆՏՈՆ. Իբրև հիվանդ բարեկամի, ես ներում եմ քեզ հիմար խոսքերդ: (Վերցնում է նարդին Վիրժինեից: Վիրժինեն հեռանում է իսկույն):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ուրեմն ներիր մի խոսք ևս ասել: Մի փոքր առաջ Հերսիլեի հետ վիճելիս, դու ասացիր. «Կինը ծնված է միայն ամուսին և մայր լինելու համար»: Ես անհարմար համարեցի նրա ներկայությամբ նկատել, այժմ կասեմ: Անտոն, քիչ կրկնիր այդ բանալ դարձվածը, կզղջաս...

ԱՆՏՈՆ. (Ծիծաղում է) Դե Լավ, քիչ զոռ տուր խելքիդ: Նստիր խաղանք: (Մարմարյանը նայում է նրան սուր հանդիմանական հայացքով և նստում ու զառերից մեկը վերցնում):

ԱՆՏՈՆ. (Զառը գցելով) Այսօր ես անպատճառ կտանեմ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Տեսնենք…

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Նույն, ամառանոցի ներքին կողմը: Միջակ հյուրասենյակ, թեթև, բայց սիրուն, կահավորված: Աջ կողմում երկու դռներ, որոնցից խորքինը տանում է Անտոնի առանձնասենյակը, իսկ ավանսցենայի կողմինը՝ դեպի մի ուրիշ. ազատ սենյակ: Այս երկու դռների միջև վառարան, որ երբեք չի վառվել: Ձախ կողմում ևս երկու դռներ, որոնցից ավանսցենայի մոտինը տանում է ննջարան, իսկ խորքինը՝ սեղանատուն: Խորքի պատի մեջ մի դուռ լայն կամարաձև: Նրա աջ ու ձախ կողմում մեծ լուսամուտներ: Այս պատի առջև պատշգամբ, որ շարունակվում է դեպի ձախ, բեմի հետևը: Պատշգամբից դեն պարտեզ, հետո անտառ, այնուհետև ժայռեր, լեռներ, ձորեր: Հյուրասենյակի խորքի աջ անկյունում սեղան, վրեն գրքեր, ամսագրեր, գրագիրներ, ալբոմ և լուսանկարներ: Ձախ անկյունում պիանինո, վրեն ծաղիկների մի մեծ փունջ և մի տուփ կոնֆետներ: Այս ու այն կողմում պատերի տակ աթոռներ, իսկ բեմի մեջտեղում գահավորակ և թեթև բազկաթոռներ; Իրիկնադեմ է: Արեգակը նոր-նոր մայր է մտնում: Հեռավոր լեռների գագաթները լուսավորվում են նրա վերջին շողերով: Վարագույրը բարձրանալուց հետո, հետզհետե այդ շողեր չքանում են, լեռների խորքից դուրս է գալիս լուսինը: Տոնային ճաշը նոր է ավարտվել: Հյուրերը զբոսնում են պարտեզում: Բեմից երևում են նրանց գլուխները, հետո չքանում: Ծառաները սեղանը հավաքում նն: Մերթ ընդ մերթ Սամսոնը ֆրակով և Վիրժինեն տոնային հագուստով անցնում են պատշգամբով, պարտեզից դեպի ձախ տանելով ափսեներ, դանակ -պատառաքաղ, գինու շշեր և այլն:

Բոլոր դռներն ու լուսամուտները բաց են:

ՏԵՍԻԼ 1

ՍՈԼՈՄՈՆ և ՆԱՏԱԼԻԱ ՍՈՒՐԱԹՅԱՆՆԵՐ

ՍՈԼՈՄՈՆ. (Առողջ դեմքով, իր տարիքի համար կայտառ տղամարդ է, կարճ խուզած ալեխառն մորուքով ու մազերով, հագած է մոխրագույն ռեդինկոտ, կռնակները բաց, սպիտակ ժիլետ, որի վրա օրորվում է վզից քաշ արած պենսնեն. ներս է մտնում խորքի դռնից, նախքան մտնելը ինչ որ պատվեր է տալիս պատշգամբով անցնող Սամսոնին) Օֆ, վերջապես ճաշն ավարտվեց: Այդ «կովկասյան կենցաղները» զահլա են տանում: Այժմ փորձենք մեր փեսայի սիգարը: (Հանում է ժիլետի գրպանից մի սիգար և վառում):

ՆԱՏԱԼԻԱ. (Նիհար երեսով, չոր-չոր կազմվածքով կին է, որի խելացի աչքերն արտահայտում են կամքի հաստատություն և վճռականություն, նա գլխաբաց է. ալեխառն մազերը բավական նոսրացել են, բայց դեմքը դեռ կրում է անցյալ գեղեցկության հետք, հագած է մետաքսյա ընկուզեգույն շրջազգեստ առանց արդուզարդի, ներս է մտնում ամուսնու հետ): Դու ուզում ես թուղթ խաղա՞լ:

ՍՈԼՈՄՈՆ. (Ընկղմվելով գահավորակի վրա) Այո, բարոյականությանս արթուն պահապան և առհասարակ տղամարդի ժուժկալության ջատագով: Չտեսա՞ր, որ Սամսոնին հրամայեցի սեղան բաց անել: Ուր գնացին հյուրերը:

ՆԱՏԱԼԻԱ. Շատերը ցրվեցին, մնացյալը տիկին Ալիմբարյանի, խելքով գնացին ձորի գլուխը: Արեգակի մայր մտնելն են դիտում, իբրև թե չտեսնված բան է: Սոլոմոն, տուն գնալու ժամանակ է:

ՍՈԼՈՄՈՆ. Ոչ, հոգույս և մարմնիս հատոր, ոչ: Մի՞թե մոռացել ես Սոլոմոն Սուրաթյանի կյանքի նշանաբանը, միշտ զվարճալին գերադասել ընտանեկան իդիալից:

ՆԱՏԱԼԻԱ. (Նստում է հառաչելով) Ա՜խ, ա՜խ, չգիտեմ, ե՞րբ պիտի ձեռք վերցնես այդ նշանաբանից:

ՍՈԼՈՄՈՆ. Սուս, ճանճի պատարագը մի սկսիր: Բայց ճաշը հիանալի անցավ:

ՆԱՏԱԼԻԱ. Չգիտեմ: Ինձ համար գլխավորն այն է, որ Հերսիլեն այսօր ուրախանում է:

ՍՈԼՈՄՈՆ. Եվ ինչպե՞ս: Այսօր նրա ամուսնության վեցերորդ տարեդարձն է, և ես ոչ մի անգամ նրան այսօրվա պես զվարթ չեմ տեսել:

ՆԱՏԱԼԻԱ. (Մտազբաղ). Այո, հիմա կարող եմ ձեռս խղճիս վրա դրած ասել, որ ես աղջկաս բախտավորեցրի:

ՍԱՄՍՈՆ. (Պատշգամբի վրա աջ կողմի լուսամուտի թղթախաղի սեղան է բաց անում):

ՍՈԼՈՄՈՆ. Հոգով փափագում եմ հավատալ, բայց…

ՆԱՏԱԼԻԱ. Էլ բայց ու մայց չկա: Հերսիլեն ունի ամեն բան, ինչ որ հարկավոր է մի կնոջ բախտավորության համար:

ՍՈԼՈՄՈՆ. Բացի մեկից — համապատասխան ամուսնուց:

ՆԱՏԱԼԻԱ. Հերիք է աստված սիրես, մի կրկնիր այդ հիմար խոսքը:

ՍՈԼՈՄՈՆ. Ոչ, սիրելիս, ասել եմ և միշտ պիտի ասեմ — Անտոնը ոտից մինչև գլուխ պրոզա է, այն էլ մաշված պրոզա, իսկ Հերսիլեն, օ՜օ, Հերսիլեն ուրիշ կին է, դու նրան լավ չես ճանաչում: Վերջապես, երբեք մինչև 30 տարեկան հասակը մի կնոջ համար չի կարելի ասել բախտավոր է նա, թե անբախտ: Սպասիր դեռ:

ՆԱՏԱԼԻԱ. Ես կարծում եմ վեց տարվա կենակցությունը բավական է համոզվելու համար, որ Հերսիլեն բախտավոր է:

ՍՈԼՈՄՈՆ. Կարծիր ինչ որ ուզում ես, բայց ես կույր չեմ: Լսիր, այսօր ճաշի միջոցին, երբ այդ Ալիմբարյաններն այնպես զվարճանում էին, ես Հերսիլեի դեմքի վրա նշմարեցի մի տեսակ թախիծ: Ես համոզված եմ, որ նա այդ րոպեին մտածում էր. «ինչո՞ւ ես ևս չունեմ դրա նման ամուսինն: Իսկ երբ մի կին այսպես է մտածում, նա երբեք չի կարող բախտավոր լինել: Ինչևէ, մի աններելի սխալ էր, որ դու արիր, Հերսիլեին տալով այդ մարդուն:

ՆԱՏԱԼԻԱ. Լռիր, ի սեր աստծո:

ՍՈԼՈՄՈՆ. Կլռեմ, բայց երևի մի օր ինքը Հերսիլեն կխոսի: Էհ, թողնենք. գալիս են. ես գնացի թուղթ խաղալու: (Դուրս է գալիս պատշգամբ):

ՆԱՏԱԼԻԱ. (Մտազբաղ) Մի՞թե նա չի սխալվում Մի՞թե նա չի սխալվում: (Մնում է մի քանի վայրկյան ամուսնու խոսքերի տպավորության տակ: Ապա ձեռով մի վիճատական շարժում անելով, անցնում է ննջարան):

(Սոլոմոնը երեք հյուրերի հետ նստում է թղթախաղի):

ՏԵՍԻԼ 2

ՀԵՐՍԻԼԵ, ԱՆՏՈՆ, ԱՆՆԱ և ՌՈՒԲԵՆ ԱԼԻՄԲԱՐՅԱՆՆԵՐ,

ՍՈՒՐԵՆ և ՎԱՐՎԱՌԵ ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆՆԵՐ և ՄԱՐՄԱՐՅԱՆ

Հերսիլեն հագած է ուրախ գույնի ամառային թեթև ճոխ շրջազգեստ: Աննան նույնպես տոնային հագուստով է: Անտոնը հագած է բաց գույնի նորաձև կարված հագուստ: Ամենքը զվարթ տրամադրության մեջ են: Սամսոնը սեղանատնից թեյ է բերում և սկսում բաժանել:

ԱՆՆԱՆ. (Ոգևորված) Ա՛խ, ինչ հիանալի երևույթ էր արեգակի մայր մտնելը: Քանի-քանի անգամ ամպերն ու լեռներն իրանց գույները փոխեցին: Եվ ի՞նչ գույներ: Երանգների այդպիսի մրցում ես չեմ տեսել ո՛չ Շվեյցարիայի և ո՛չ Իտալիայի երկնքի տակ:

ՀԵՐՍԻԼԵ. (Անսովոր զվարթ) Աննա, դու վարակեցիր ինձ քո ոգևորությամբ: Որքան աշխույժ և վառվռուն ես, Աննա: Դու խոսքով ուղղակի կյանք ես փչում ամենաչնչին երևույթներին: Քո այստեղ գալուց հետո շատ բան է փոխվել իմ աչքում: Առաջ ես սիրում էի խոր ձորերը, մթին անդունդները և սոսկալի բարձրությունը: Դու ինձ սովորեցրիր սիրել բնության մեղմ, քնքուշ տեսարանները: Ինչ եմ ասում, դու ինձ սովորեցրիր սիրել կյանքի լուսավոր կողմերը և հասկանալ նրանց խորհուրդը:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ասում են, արտաքին երևույթներին գույն տվող մեր անձնական տրամադրությունն է:

ԱՆՆԱ. Ահա այդ է ճիշտը… Հերսիլե մեր անձնական տրամադրությունը: Այսօր քո ամուսնության տարեդարձն է, ուրախ հյուրեր, սքանչելի բնություն, (ժպտալով) գուցե մի փոքր էլ շամպայնն ազդել է մեզ վրա: Իսկ դուք, պարոն Անտոն, ինչպես երեում է, շատ էլ չեք սիրում բնության հրաշալիքները...

ԱՆՏՈՆ (Այդ միջոցին գրավված է ինչ-որ գոծնական խոսակցությամբ Սուրենի հետ): Ես վաղուց եմ կշտացել այդպիսի տեսարաններից:

ՀԵՐՍԻԼԵ. Դու երբեք բնության գեղեցկությամբ չես հիացել: (Վերցնում է պիանինոյի վրայից կոնֆետների տուփը, բաց է անում և դնում սեղանի վրա):

ՎԱՐՎԱՌԵ. (Պարզ հագնված, բավական սիրուն, բայց գեր ու կոշտ դեմքով կին է) Ուղիղն ասած, ես զարմանում եմ, որ մարդիկ ամեն դատարկ բանով հիանում են: Արեգակը մայր մտավ, լուսինը դուրս եկավ, երկինքը կարմրեց, կապտեց ինչ հիանալու բաներ են դրանք: (Վերցնելով երկու խոշոր կոնֆետներ, մեկը իր բերանն է դնում, մյուսը տալիս է ամուսնուն):

ՍՈՒՐԵՆ. (Նկատելով Աննայի հեգնական ժպիտն իր կնոջ խոսքերի վրա, գրգռվում է) Իմ կարծիքով, գեղեցիկ կարելի է համարել միայն այն, ինչ որ այս կամ այն կերպ նպաստում է մեր կյանքի բարօրությանը: Իսկ այդ բարձր լեռներն իրանց ձյունապատ գագաթներով ուրիշ ոչինչ են, եթե ոչ մի-մի խոչընդոտ մեր կյանքի բարօրության համար:

ՌՈՒԲԵՆ. Այդ ինչպե՞ս, հետաքրքրական է իմանալ:

ԱՆՏՈՆ. Շատ հասկանալի է, եթե այդ լեռները չլինեին, գուցե մեր երկիրն այսօր ծածկված լիներ երկաթուղու գծերով:

ՍՈՒՐԵՆ. Եվ մենք մեր ապրուստի միջոցները կրկնակի Էժան ձեռք կբերեինք մեր կյանքի բարօրության համար:

ՌՈՒԲԵՆ. Դարձյալ բարօրություն, բայց ի՞նչն եք համարում կյանքի բարօրություն, պարոն Ֆրանգուլյան:

ՍՈՒՐԵՆ. Իմ ընտանիքի առողջությունն ու նյութական ապահովությունը:

ԱՆՆԱ. Կարճ և հասկանալի:

ՎԱՐՎԱՌԵ. (Մի կոնֆետ ևս վերցնելով) Իհարկե, այդպես է, ամենքի համար այդպես է: (Դնում է կոնֆետը բերանը) Դու համաձայն չե՞ս Հերսիլե:

ՀԵՐՍԻԼԵ. Ինձ մի հարցրու, Ես մի այնպիսի տրամադրության մեջ եմ, որ չգիտեմ, չգիտեմ... գուցե պատրաստ եմ գեղեցիկը սիրել նույնիսկ հանցանքի մեջ:

ԱՆՏՈՆ. (Զարմացած) Գեղեցիկը հանցանքի մե՞ջ...

ԱՆՆԱ. Շատ անգամ գեղեցիկը հանցանքի մեջ բյուր անգամ հաճելի է, քան առաքինին տգեղության մեջ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Տարօրինակ խոսքեր մեր կանանց բերանում:

ՎԱՐՎԱՌԵ. Խելքս բան չկտրեց: (Կոնֆետ է վերցնում):

ՌՈՒԲԵՆ. Ես այսպես եմ հասկանում տիկնանց ասածը, գեղեցկություն ուրիշ ոչինչ է, եթե ոչ առաքինություն: Իհարկե, գեղեցկություն ընդհանուր մտքով և ոչ միայն ֆիզիկական գեղեցկություն:

ՎԱՐՎԱՌԵ. Ամենից հասկանալին Սուրենի ասածն էր. ընտանիքի առողջություն և ապահով մնացյալը հիմար բաներ են:

ՌՈՒԲԵՆ. Միանգամայն հիմար... Այս բնության կյանքի և ո՞ր հրաշալիքը կարող է այնքան հաճույք պատճառել, որքան ընտանիքի կուշտ և առողջ դեմքերը:

ՍՈՒՐԵՆ. Դուք կատակ եք անում պարոն Ալիմբարյան:

ՌՈՒԲԵՆ. Ոչ, ոչ, ես հրճվում եմ տեսնելով, որ մեզանում կենսական բոլոր խնդիրները գումարված ու դրված են մի գծի տակ — ընտանիքի առողջություն և ապահովություն: Մնացյալ բոլոր խնդիրները դատարկ բաներ են, հիմար, անգործ մարդկանց անօգուտ խելքի արդյունք:

ՍՈՒՐԵՆ. Դուք պարզապես ծաղրում եք, պարոն Ալիմբարյան, չնայելով որ ինքներդ ամուսնացած եք: Բայց ես կասեմ, օր անհատի երջանկությունը հաստատուն չէ, եթե այն հիմնված չէ այն պատվանդանի վրա, որի անունն է ընտանիք:

ՍՈԼՈՄՈՆ. (Պատշգամբից) Զարմանալի չի բերում թուղթս, զարմանալի: Փաս:

Անտոնը գլխով հավանության նշան անելով Սուրենին, մոտեցել է Հերսիլեին, որ նստած է բազկաթոռի վրա և կանգնելով նրա հետևում, ձեռները սիրալիր դրել է նրա ուսերի վրա: Հերսիլեն տխրում է:

ՌՈՒԲԵՆ. (Դառն հեգնությամբ) Ափսոս միայն, որ այդ ձեր ամուր համարված պատվանդանն այժմ բավական խախտված է, պարոն Ֆրանգուլյան: Եվ նրանք, որոնց աշխարհայացքը մի փոքր բարձր է իրանց ամուսնու կոշիկներից, այժմ չեն կարողանում իրանց անհատական երջանկությունը նրա վրա հիմնել:

ՍՈՒՐԵՆ. (Տաքանալով) Այդ այնտեղ ձեր լուսավոր Եվրոպայում և ոչ մեզանում:

ՌՈՒԲԵՆ, Ահ, երանի ընտանիքը մեզանում այնքան երջանիկ լիներ, որքան այնտեղ:

ՆԱՏԱԼԻԱ. (Գալիս է ննջարանից) Օհ, հոգնեցի նրանց զբաղեցնելուց: Կարծեմ, քնել ես ուզում:

ՀԵՐՍԻԼԵ. Ահ, ժամանակն է, (Շտապով անցնում է ննջարան):

ՆԱՏԱԼԻԱ. Անտոն, նրանք քեզ են ուզում:

ԱՆՏՈՆ. (Կես կատակով, կես լուրջ) Ներեցեք, ես պիտի երեխաներին քնեցնեմ: (Գնում է ննջարան):

ՎԱՐՎԱՌԵ. (Ռուբենին) Տեսաք, այդ ընտանեկան երջանկությունը:

ՌՈՒԲԵՆ. Ես այլևս ոչինչ չեմ ասում: (Մոտենում է պիանինոին և նոտաները թերթում):

ՍՈԼՈՄՈՆ. (Պատշգամբից) Նատալիա, արի մոտս կանգնիր, քո ոտն ինձ գալիս է: (Նատալիան գնում է պատշգամբ բեմի հետևից լսվում է շվիի ձայն: Բոլորն ականջ են դնում):

ԱՆՆԱ. Ահ, այդ ի՞նչ է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Շվի: Մի ոտաբոբիկ և կիսամերկ եզդի ամեն երեկո գալիս է լուսամուտի տակ, թմբի վրա ծալապատիկ նստում ու նվագում: (Մոտենում է Ռուբենին):

ԱՆՆԱ. Հիանալի է: Եվ ինչ սազում են այն մելամաղձոտ հնչյունները լուսնկա երեկոյին:

ՌՈՒԲԵՆ. Շատ հետաքրքրական է տեսնել այդ երաժշտին:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Գնանք: (Ցածր ձայնով) Ես ձեր բոլոր ասածների միտքը հասկացա: Խոսենք առանձին: (Գնամ է պատշգամբ Ռուբենի թևն առած):

ՎԱՐՎԱՌԵ. Գնանք, Սուրեն, մենք էլ մոտիկից լսենք. (Վերցնում է մի բուռն կոնֆետ, Աննային) դուք չե՞ք ուզում լսել:

ԱՆՆԱ. Հեռվից ավելի քաղցր է հնչում շվին:

ՍՈԼՈՄՈՆ. (Թղթերը ձգելով սեղանի վրա) Պարոններ, ես էլ չեմ ուզում խաղալ: Բավական է ինչքան տարվեցի: (Վեր է կենում և Նատալիայի հետ անցնում է պատշգամբի ձախ կողմը: Խաղընկերները հետևում են նրան, զվարթ խոսակցելով):

ՏԵՍԻԼ 3

ՀԵՐՍԻԼԵ և ԱՆՆԱ

(Հերսիլեն դուրս է գալիս ննջարանից)

ՀԵՐՍԻԼԵ. Դու մնացել ես մենակ:

ԱՆՆԱ. Ես մնացի, կամենալով առանձնանալ քեզ հետ:

ՀԵՐՍԻԼԵ. Ես էլ կամենում էի քեզ հետ առանձնանալ, (Բռնելով ընկերուհու ձեռքը) Ախ, Աննա, չգիտեմ ինձ ինչ է պատահում, մի զարմանալի տրամադրության մեջ եմ: Կարծեմ մի քանի հիմարություններ ասացի:

ԱՆՆԱ. Հիմարություններ չասացիր միայն…

ՀԵՐՍԻԼԵ. Միայն ի՞նչ, ասա...

ԱՆՆԱ. Տրամադրությունդ մատնեցիր հյուրերի ներկայությամբ: Հերսիլե, ես հասկանում եմ քո հոգին և…

ՀԵՐՍԻԼԵ. Եվ խղճում ես, այո... Ախ, երանի քեզ, Աննա, հազար երա՜նի, որ ուշ ես ամուսնացել և ինքդ ես կարգադրել քո ճակատագիրը:

ԱՆՆԱ. Բայց չէ՞ որ քո ճակատագիրն էլ ինքդ ես կարգադրել:

ՀԵՐՍԻԼԵ. (Դառն հեգնությամբ) Ես: Եվ դու հավատում ես այդ բանին: Ոչ, Աննա, իմ կամքը իմ ծնողների գերին է եղել, այսինքն իմ մոր գերին, հայրս մեղք չունի: Նա է կուրացրել իմ աչքերը, մթնեցրել իմ ուղեղը, խլել ինձանից իմ կամքի ուժը: Նա իմ շուրջը ստեղծել է գովասանքների արբեցուցիչ մթնոլորտ, ուր շոգիացել են Բեգմուրյանի թերությունները և խոշորացել նրա մրջյունային արժանավորությունները: Եվ այդ բոլորից հետո է միայն նա դարձել իմ կամքին և ասել. «սիրելիս, մենք քեզ չենք ստիպում, այլ միայն հարցնում ենք՝ ուզում ես գնալ Բեգմուրյանին»: Ես արտասանել եմ «այո»: Եվ այդ «այո»-ն միանգամայն, միշտ նրան ազատել է ապագայի բոլոր պատասխանատվությունից:

ԱՆՆԱ. Բայց չէ՞ որ դու ասում էիր Բեգմուրյանը լավ մարդ է:

ՀԵՐՍԻԼԵ. Ասում էի և այժմ էլ նրան չեմ պարսավում, բայց ի՞նձ ինչ, Աննա, որ նա լավ մարդ է, ինձ ինչ: Նա օտար է իմ սրտին, միանգամայն օտար և միշտ օտար է եղել միշտ…

ԱՆՆԱ. Խեղճ Հերսիլե, ուրեմն դու դժբախտ ես…

ՀԵՐՍԻԼԵ. Եվ դու դեռ հարցնում ես: Միթե չես դիտում, չես տեսնում (Շվին դադարում է):

ԱՆՆԱ. Ես միայն տեսնում և զգում եմ, որ նա բոլորովին քո կյանքի ընկերը չէ: Բայց վեց տարի ապրել եք միասին, մի՞թե սովորությունը քեզ չի կապել նրա հետ:

ՀԵՐՍԻԼԵ. Կապել է, այո, անտանելի շղթաներով: Ապրել եմ: Ով, ե՞ս: Ոչ, ես չեմ ապրել, այլ թմրել եմ բուսական կյանքի թմրությամբ. (Շվին նոր եղանակ է սկսում):

ԱՆՆԱ. Եվ նոր ես զգում այդ:

ՀԵՐՍԻԼԵ. Ինչու նոր: Զգում եմ այն օրից, երբ սկսել եմ ճանաչել կյանքը, հասկանալ իմ վիճակը: Այժմ միայն իմ դրությունն ավելի անտանելի է թվում ինձ, և պատճառը դու ես, Աննա:

ԱՆՆԱ. Ե՞ս:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, դու, Աննա, մի վիրավորվիր, այդ քեզ պատիվ է բերում: Ես միշտ զգում էի, որ կան աշխարհի երեսին երջանիկ մարդիկ, կա և երջանիկ կյանք: Զգում էի մութ կերպով, բնազդմամբ: Քո գալուց հետո ինձ համար պարզվեց այն, ինչ որ մութն էր մինչև այժմ: Քո գեղեցիկ բացատրությունները իսկական երջանիկ ամուսնական կյանքի, քո ընդարձակ հայացքները կյանքի խորհուրդների մասին, քո ազատ գաղափարները կնոջ ինքնուրույնության վերաբերմամբ և, վերջապես, քո սեփական երջանկությունը տվեցին իմ բախտին վերջին հարված: Եվ այժմ ես միանգամայն դժբախտ եմ, Աննա... Ներիր, սիրելիս, իմ նախանձը չար չէ, այլ բարեկամական, եղիր երջանիկ բյուր անգամ ավելի, իսկ ես... ես անբախտ եմ: Հանդարտ լալիս է. շվին դադարում է:

ԱՆՆԱ. Հանգստացիր, սիրելիս, ուշքի եկ, ժամանակ չէ: Հետո կխոսենք: Ահա, կարծես գալիս են:

ՀԵՐՍԻԼԵ. Ոչ, ոչ, այլևս չեմ ուզում կեղծիքով ապրել, հերիք է… (աչքերը սրբում է, ուշքը ժողովում):

ԱՆՆԱ. Կեղծիքով ապրել, այո, կեղծիքով ապրողը թշվառ է:

Պատշգամբից ներս են մտնում Ռուբենը, Մարմարյանը, Ֆրանգույլանները, Սուլթանները և մյուս հյուրերը:

ՏԵՍԻԼ 4

ՆՈՒՅՆՔ և ՌՈՒԲԵՆ, ՄԱՐՄԱՐՅԱՆ, ՎԱՐՎԱՌԵ

ՌՈՒԲԵՆ. Այդ շատ հետաքրքրական էր: Վաղուց չէի լսել: Խեղճ մարդ, ինչպես ապշած նայեց երեսիս, երբ ես ծափահարեցի:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Արևելցու տեսակետից ծափահարությունը մի տեսակ վայրենություն է: Արևելցին երաժշտությամբ հրճվում է սրբազան լռությամբ. (Անտոնը դուրս է գալիս ննջարանից):

ՌՈՒԲԵՆ. (Մոտենալով Հերսիլեին) Ցտեսություն, տիկին, ձեր ընկերությունից կշտանալ չի կարելի, իսկ արդեն ուշ է:

ՀԵՐՍԻԼԵ. Թույլ տվեք, որ Աննան այս գիշեր ինձ մոտ մնա:

ՌՈՒԲԵՆ. Թույլ տամ: Տիկին, իմ և Աննայի հարաբերությունների մեջ թույլտվություն բառը ջնջված է: Ազատ է անելու, ինչ որ կամենում է. (Աննային) կամենում ես մնալ:

ԱՆՆԱ. Ես կվերադառնամ, Հերսիլե, թող գնամ մորաքրոջս հանգստացնեմ: Ամբողջ օրը նա ինձ չի տեսել: Առայժմ, ցտեսություն, (սեղմում է մյուսների ձեռքը):

ՎԱՌՎԱՌԵ. Սուրեն, երեխաները անհամբեր սպասում են: Ես ուրիշի տանը գիշերել չեմ կարող. (ուզում է մի կոնֆետ ևս վերցնել, բայց ամաչում է, հետ է քաշվում):

ՀԵՐՍԻԼԵ. (Կոնֆետների տուփը փակելով, առաջարկում է Վարվառեին) Սիրելիս, այս տուփը տար իմ կողմից երեխաներիդ համար:

ՎԱՐՎԱՌԵ. (Վերցնում է տուփը) Էհ, ինչ հարկավոր է, ավելորդ է:

ՀԵՐՍԻԼԵ. Ոչ, ոչ, վերցրու. (համբուրվում է Վարվառեի հետ): Բոլոր հյուրերը սեղմում են տանտերերի ձեռքը և գնում են խորքի դռներով: Հերսիլեն և Անտոնը ուղեկցում են նրանց մինչև պատշգամը: Այնտեղ Սամսոնը տալիս է նրանց վերարկու, ձեռնափայտ և այլն: Վիրժինեն հավաքում է բաժակներն ու տանում սեղանատան:

ՏԵՍԻԼ 5

ՀԵՐՍԻԼԵ և ԱՆՏՈՆ

ԱՆՏՈՆ. (Վերադառնում է Հերսիլեի թևից բռնած) Ես հոգով փափագում եմ քեզ հետ առանձնանալ, իսկ դու տիկին Ալիմբարյանին խնդրում ես քեզ մոտ գիշերել: Չեմ հասկանում, այդ ինչ տարօրինակ ցանկություն էր:

ՀԵՐՍԻԼԵ. (Թևն ազատելով) Երեխաները քնեցին:

ԱՆՏՈՆ. Շատ հանգիստ: Թող ինչ ուզում է ասի այդ պարոն Ալիմբարյանը, ինձ համար ընտանիքից բարձր բան չկա:

ՀԵՐՍԻԼԵ. Կարծեմ, Ալիմբարյանը ընտանիքին ավելի բարձր և ավելի մեծ նշանակություն տվեց, քան դու, քո քեռորդին և ամենքը:

ԱՆՏՈՆ. Նա հերքեց ընտանեկան կյանքի երջանկությունը:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, այն ընտանեկան կյանքի, որ հիմնված չէ համերաշխության վրա:

ԱՆՏՈՆ. (Նայում է նրան, սուր հայացքով) Հերսիլե, դու այնպիսի եղանակով ես խոսում, որ կարծես նրա ասածների մեջ զգացել ես ակնարկ մեր մասին:

ՀԵՐՍԻԼԵ. Ով գիտե, գուցե և ակնարկեց: Մի՛թե իրավունք չունի:

ԱՆՏՈՆ. Իրավունք: Եվ այդ ասում ես դու: Գոնե իմ վերաբերմամբ ամեն ակնարկ կարող է անիրավացի լինել: Ես գոհ եմ իմ ընտանեկան վիճակով և երջանիկ: Երբ հիշում եմ իմ աննպատակ անցյալը և համեմատում ներկայի հետ, զարմանում եմ ինչու այնչափ կույր էի, որ տասը տարի առաջ չամուսնացա: Սակայն ինչ եմ ասում, այն ժամանակ դու չէիր լինի իմ կինը. (Գրկում է Հերսիլեին): Նստենք մի փոքր, այսօր ես առանձին տրամադրություն ունիմ քեզ հետ զրուցելու:

ՀԵՐՍԻԼԵ. (Ազատվելով նրա գրկից) Թող ինձ, ես նստել չեմ ուզում:

ԱՆՏՈՆ. Երբ հիշում եմ, թե ինչպիսի ջանքերով ու խորամանկությամբ խլեցի քեզ տասնյակ փայլուն երիտասարդների ձեռքից, երբ մտածում եմ, որ դու այժմ իմն ես, ուղիղն ասած, չգիտեմ ինչին վերագրեմ իմ բախտը... (Համբուրում է):

ՀԵՐՍԻԼԵ. (Դարձյալ ազատվելով նրա գրկից) Ասա խնդրեմ, շա՞տ ես սիրում ինձ:

ԱՆՏՈՆ. Ի՞նչ, և դու դեռ հարցնում ես. (Բռնում է նրա ձեռները):

ՀԵՐՍԻԼԵ. Եթե ինձանից զրկվես, շա՞տ կվշտանաս:

ԱՆՏՈՆ. (Բաց թողնելով նրա ձեռքերը) Հերսիլե՛...

ՀԵՐՍԻԼԵ. Ինձ թվում է, որ քո սերը հիմնված է խորին եսամոլության վրա, որ դու իմ մեջ սիրում ես ոչ ինձ, այլ քեզ, քո անձնական երջանկությունը:

ԱՆՏՈՆ. Չեմ հասկանում, այդ ինչ վերլուծություն է: Միթե մարդ ու կնոջ եսերը կապված չեն սերտ կապով:

ՀԵՐՍԻԼԵ. Ասում են, բայց ես չգիտեմ՝ չեմ զգացել: Կկամենայի միայն իմանալ, կարող ես սիրել ինձ քո եսից անկախ, հենց այնպես սիրել, ինչպես մի օտարի:

ԱՆՏՈՆ. Ինչպես մի օտարի: Ահա թե ինչ: Ասա խնդրեմ, ի՞նչ կարող է տալ ինձ այդպիսի մի, ասենք, պլատոնական սեր:

ՀԵՐՍԻԼԵ. Նա կտա քեզ սիրվողի հարգանքը, պատկառանքը, անհուն երախտագիտությունը և անվերջ գովասանքները:

ԱՆՏՈՆ. Շատ ողորմելի մի վարձատրություն: Բայց ես դարձյալ չեմ հասկանում քո միտքը, Հերսիլե:

ՀԵՐՍԻԼԵ. (Մտազբաղ) Իմ միտքը... Իմ միտքը կապված է իմ զգացումների հետ: Եթե կարող ես, թափանցիր սիրտս և հասկացիր: (Մոտենում է խորքի լուսամուտին և նայում դեպի դուրս):

ԱՆՏՈՆ. (Մի քանի վայրկյան լուռ նայում է նրա հետևից մտատանջության մեջ) Ա՛ա, կարծես, մասամբ հասկանում եմ...

ՀԵՐՍԻԼԵ. Այո՛, մասամբ և այն էլ այդպես ո՞ւշ:

ԱՆՏՈՆ. Ուշ: Ոչ, այդ ինձ հայտնի է նույնիսկ մեր ամուսնության առաջին օրից: Բայց ես կարծում էի, որ դու դեռ անչափահաս ես, կյանքը լավ չես ճանաչում և չգիտես իսկապես ինչ ասել է ամուսնական երջանկություն:

ՀԵՐՍԻԼԵ. Եվ հույս ունեիր փոխադարձ սիրո փոխարեն ստանալ կեղծիք, այո՞:

ԱՆՏՈՆ. Կեղծի՞ք:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, այն կեղծիքը, որ տալիս են հարյուրից ինսունինը կանայք իրենց ամուսիններին: Դու կարծում էիր, որ տարիները կառաջացնեն սովորություն, իսկ սովորության զգացումը կհաշտեցնի ինձ դրությանս հետ: Դու մտածում էիր այսպես. «Թող եռ գա իր ներսում, փրփրի որքան կամենում է, ժամանակը կհանդարտեցնի նրան և վերջ ի վերջո կդարձնի իմ գերին:

ԱՆՏՈՆ. Գերի՞ն...

ՀԵՐՍԻԼԵ. Այո, մեկն այն ողորմելի էակներից, որոնք մի անգամ իրենց վիզը դնելով օրինական անհամերաշխ ամուսնության լծի տակ, մինչև մահ քաշում են այդ լուծը անբան անասնի պես:

ԱՆՏՈՆ. Սխալվում ես, ես ուրիշ կերպ եմ մտածել: Ես մտածել եմ այսպես, սերը, այսինքն իսկական ամուր սերը ձեռք է բերվում ոչ միանգամից, այլ համբերությամբ և համառ հետամտությամբ, ինչպես աշխարհիս ամենաթանկագին բանը: Եվ ահա մեր ծանոթության առաջին օրից սկսած աշխատել եմ քայլ առ քայլ մոտենալ քո սրտին: Սիրել եմ քեզ հոգուս ամբողջ ուժով, սիրել եմ. Ոչ միայն իբրև ամուսնու, այլ իբրև կյանքիս ընկերուհու, իբրև մարդու, ոչինչ չեմ խնայել քեզ համար, աշխատել իմ անվերջ զիջումներով ու բարությամբ կոտրել քո սրտի սառույցը:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, ճիշտ է, իմ վերաբերմամբ դու միշտ եղել ես զիջող, բարեսիրտ ու սիրող, այլև գուցե վեհանձն: Բայց միթե չե՞ս զգացեք մի բան, այն է, որ քո այդ բարությունը, սերը և վեհանձնությունն ինձ ճնշում են ինչպես մի դառն, անտանելի մի լուծ: Միթե չե՞ս զգացել, որ հեշտ չէ մի կնոջ համար ստանալ թեկուզ իր օրինական ամուսնուց ամեն բան և փոխարենը չկարողանալ տալ ոչինչ, բացի սառնությունից և անտարբերությունից:

ԱՆՏՈՆ. Խոստովանում եմ, չեմ զգացել, որովհետև երբեք չէի կարող երևակայել, թե՛ մարդու արածներն իր օրինական կնոջ համար նրա կողմից պիտի ընդունվեն իբրև երախտիք: Հերսիլե, մի քրքրիր քո հոգին ասեղի ծայրով, նայիր կյանքին հասարակ աչքերով և զսպիր քո վառվող երևակայությունը: Քեզանից է կախված դարձնել մեր կյանքը կամ մի փշալի անապատ, կամ ծաղկազարդ բուրաստան:

ՀԵՐՍԻԼԵ. Օ՜օ, եթե ինձանից լիներ կախված, այսօր այս լեզվով չէի խոսիլ քեզ հետ: Բայց դժբախտաբար խելքս չի կարողանում խեղդել այժմյան զգացումներս և առաջացնել ուրիշ զգացումներ իմ սրտում:

ԱՆՏՈՆ. Ուրեմն ես երբե՞ք չպիտի արժանանամ քո փոխադարձ սիրուն, երբեք...

ՀԵՐՍԻԼԵ. (Լռություն, կռվում է ինքն իրեն) Չգիտեմ...

ԱՆՏՈՆ. (Գրգռվելով) Հերսիլե:

ՀԵՐՍԻԼԵ. Մի սպասիր այլևս կեղծել: Բավական է, որքան ես տանջվեցի կեղծելուց: Այժմ չեմ կարող, որովհետև այլևս ինձ համար պարզ է այն սարսափելի տարբերությունը, որ կա իսկական կյանքի և բուսական գոյության մեջ:

ԱՆՏՈՆ. Այժմ: Հասկանում եմ: Քո ընկերուհուն տեսնելուց հետո: Դու նախանձում ես նրա վիճակին, այնպես չէ, դու նրան երջանիկ ես համարում, իսկ քեզ անբախտ, այո: Հերսիլե, մի հավատար ուրիշների բախտին: Նա կարող է խաբուսիկ լինել: Դժվար է թափանցել մարդկանց սիրտը:

ՀԵՐՍԻԼԵ. Ես աչքերով չեմ դատում, այլ հոգով:

ԱՆՏՈՆ. Կան հարյուրավոր կանայք, Հերսիլե, որ քեզ են նախանձում: Հարցրու նրանց և կասեն քեզ, որ կանանց մեջ ամենաերջանիկը դու ես:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, չեմ հերքում, ինձ համարում են երջանիկ, սակայն այն կանայք են համարում, որոնք գիտեն իրանց հոգու ամայությունը մոռանալ հանուն իրանց ամուսնու հարստության, ոսկու, ադամանդների, շքեղ արդուզարդերի և փայլուն կահ-կարասու:

ԱՆՏՈՆ. Իսկ դու... դու... ուզում ես քո սրտի ամայությունը լցնել ավելի... ավելի էական բանով, այո՞: (Հուզվում է ու դողում):

ՀԵՐՍԻԼԵ. Վիրավորված: Մի վիրավորիր ինձ կասկածներովդ ես քեզ ոչ մի առիթ չեմ տվել:

ԱՆՏՈՆ. Այո, մինչև այժմ առիթ չես տվել, բայց թվում է ինձ, որ այսուհետև ուզում ես տալ:

ՀԵՐՍԻԼԵ. Ես չեմ կարող այդ եղանակով խոսել քեզ հետ: (Քայլերն ուղղում է դեպի ննջարան):

ԱՆՏՈՆ. Ոչ, սպասիր: Այժմ հենց այս լեզվով պիտի խոսեմ քեզ հետ: Բավական է որքան համբերեցի, լռեցի և տանջվեցի: Հերսիլե, զսպիր վառ երևակայությունդ, ապա թող նա կարող է քեզ անդունդ գլորել:

ՀԵՐՍԻԼԵ. Թող գլորի, այլևս կեղծել չեմ ուզում և չեմ կարող:

ԱՆՏՈՆ. Չես կարող, ուրեմն ես էլ չեմ կեղծիլ: Լսիր, մինչև այսօր դու խոցոտել ես իմ ինքնասիրությունը, իմ առնական եսը, և ես քեզ ներել եմ և լռել: Իսկ այժմ, երբ այդպիսի հանդգնությամբ պարզում ես քո արհամարհանքը դեպի ինձ. ականջ դիր: Ես կշարունակեմ մի առժամանակ ևս քեզ հետ վարվել այնպես, ինչպես վարվել եմ մինչև այժմ, սիրով, բարությամբ, փաղաքշանքներով: Բայց եթե դու այսուհետև էլ մնաս այդպես սառն, անտարբեր, եթե այսուհետև էլ արհամարհես ինձ հոգուդ խորքում, այն ժամանակ իմացիր, որ ես մի հասարակ գյուղացու որդի եմ և լեռնական: Հասկանո՞ւմ ես միտքս:

ՀԵՐՍԻԼԵ. Հասկանում եմ: Դու կդիմես քո հայրերի ու նախահայրերի միջոցին, կդառնաս բռնակալ:

ԱՆՏՈՆ. Ստիպված կլինեմ դառնալ: Կինը կամ պիտի սիրի իր մարդուն կամ պիտի վախենա նրանից: Ես քո մեջ չկարողացա սեր գրգռել, կզարթեցնեմ երկյուղ և հարգանք… Այդ գուցե ավելի լավ է: (Ուզում է գնալ իր առնձնասենյակը):

ԱՆՆԱ. (Ներս է մտնում խորքի դռներից) Ահա և ես... (տեսնելով Հերսիլեին հուզված ու գունատ, կանգ է առնում դռների առջև, զարմացած):

ԱՆՏՈՆ. Շարունակեցեք, տիկի՛ն կրթել իմ կնոջը... (Անցնում է առանձնասենյակը):

ԱՆՆԱ. Հերսիլե, ի՞նչ է պատահել: Դու դողում ես:

ՀԵՐՍԻԼԵ. Ահ, մի հարցնիր (Հեկեկալով ընկնում է բազկաթոռի վրա):

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Բեգմուրյանների քաղաքային բնակարանը: Ընդարձակ հյուրասենյակ: Աջ պատի մեջ դեպի փողոցի պատշգամբը դռներ, որոնց աջ ու ձախ կողմերում լուսամուտներ: Խորքի պատի մեջ երկու դռներ, մեկը բոլորովին ձախ, գրեթե անկյունում, դեպի նախասենյակ, մյուսը բեմի միջին ուղղությամբ դեպի սեղանատուն: Երկու դռներ ևս ձախ պատի մեջ, որոնցից խորքինը դեպի Անտոնի (առանձնասենյակը, իսկ ավանսցենայի կողմինը-Հերսիլեի բուդուարը, որից դեն է ննջարանն ու երեխաների սենյակը: Աջ պատի անկյունում դաշնամուր (ռոյալ), իսկ ավանսցենայի կողմում փոքրիկ գեղեցիկ գրասեղան սև փայտից, վրեն արծաթյա թանաքաման ու զանազան պարագաներ, նաև մի քանի գրքեր գեղեցիկ կազմերով ու մի փոքրիկ ժամացույց: Ձախ պատի առջև գահավորակ, բազկաթոռներ, սեղան, նրբագործ սփռոցով, վրան ալբոմ: Առհասարակ սենյակը կահավորված է ճաշակով: Նրա գլխավոր զարդերն են նկարներ, գրավյուրներ, արձանիկներ և այլ գեղարվեստական իրեր, որոնց սիրահար է Հերսիլեն: Խորքի պատի վրա հայելի վենետիկյան ոճով, իսկ աջ կողմում վառարան… որի առջև շիրմա:

Սեպտեմբերի կեսն է, եղանակը ջերմ է. բոլոր լուսամուտներն ու դռները բաց են, բացի առանձնասենյակի դռներից: Սեղանատանը երևում են ճաշի սեղանը, ճերմակ սփռոցով ծածկված և պատի ժամացույցը: Այնտեղ մերթ ընդ մերթ երևում են Սամսոնն ու Վիրժինեն...

ՏԵՍԻԼ 1

ՀԵՐՍԻԼԵ և ՆԱՏԱԼԻԱ

Վարագույրը բարձրանալիս Հերսիլեն հափշտակված դաշնամուր է նվագում: Նախասենյակից լսվում է զանգակի ձայն: Սամսոնը դուրս է գալիս սեղանատնից, անցնում է նախասենյակ, փոքր անցած՝ այնտեղից ներս է մտնում Նատալիան գլխարկով:

ՆԱՏԱԼԻԱ. (Մոտենում է Հերսիլեին կանգ է առնում սպասելով, որ նա հետ նայի: Հերսիլեն հափշտակված չի նկատում Նատալիային, որը վերջապես համբուրում է նրան):

ՀԵՐՍԻԼԵ. (Ցնցվելով, ուժգին զարնում է դաշնամուրի ստեղներին և սուր դիսոնանսով նվագումն ընդհատում է: Ա՛հ, հազիվ գտել էի տոնը խանգարեցին: (Հետ է նայում) Ա՛հ, այդ դո՞ւ ես, մամա: Վեր է նայում:

ՆԱՏԱԼԻԱ. Տա՞նն է:

ՀԵՐՍԻԼԵ. Այո: Կաբինետում զբաղված է իր հաշիվներով:

ՆԱՏԱԼԻԱ. Գլխարկի ժապավեններն արձակելով: Էլի բարկացա՞ծ է:

ՀԵՐՍԻԼԵ. Չգիտեմ, գնա ինքդ տես, հարցրու: (Անցնում է հայելու կողմը և մազերը շտկում է):

ՆԱՏԱԼԻԱ. (Գլխարկը դնում է սեղանի վրա և կամացուկ մոտենալով Հերսիլեին ձեռը բռնում է) Հերսիլե, ասելո՞ւ ես ինձ վերջապես, թե ինչ է պատահել ձեր մեջ:

ՀԵՐՍԻԼԵ. (Ձեռն ազատելով) Թող ինձ, մամա, մի հարցրու ոչ մի բանի մասին, մի հարցրու, խնդրում եմ:

ՆԱՏԱԼԻԱ. Հեշտ է ասել «ոչ մի բանի մասին մի հարցրու»: Մի ամսից ավել է այս տանն ուրախ դեմք չեմ տեսնում: Նա չի խոսում ինձ հետ, իսկ դու օրից օր մաշվում ես ու հալվում: «Մի հարցրու, կարծես ես մայր չեմ կամ սիրտ չունեմ:

ՀԵՐՍԻԼԵ. (Դառն հեգնությամբ) Մա՛յր, իհարկե, մայր ես և շատ հոգատար, շատ սիրող մայր, ինչպես և բոլոր քեզ նման մայրերը:

ՆԱՏԱԼԻԱ. Այդ ի՞նչ լեզվով ես խոսում հետս: Չլինի ծաղրում ես ինձ…

ՀԵՐՍԻԼԵ. Մամա բավական է, դու էլ մի՛ տանջիր ինձ:

ՆԱՏԱԼԻԱ. Ես եմ քեզ տանջում, թե՞ դու ինձ: Հերսիլե, ես չեմ հանգստանալ մինչև որ չիմանամ ինչ է պատահել այս տանը: Ես հենց դրա համար եմ եկել և ոտս այստեղիս դուրս չեմ դնիլ մինչև որ բոլորը չպատմես, լսո՞ւմ ես, բոլորը:

ՀԵՐՍԻԼԵ. (Մի քանի վայրկյան ինքն իր հետ լուռ կռվելուց հետո մոտենում է մորը) Մամա, առաջ քան ամեն բան գիտենալը ասա ինձ. եթե մի օր թողնեմ այս տունն ու հեռանամ, կընդունե՞ս ինձ քեզ մոտ:

ՆԱՏԱԼԻԱ. Ցնցվում է: Թողնես այս տունն ու հեռանաս: Ինչո՞ւ պիտի թողնես:

ՀԵՐՍԻԼԵ. (Դառն հեգնությամբ) Ինչո՞ւ, հենց այնպես քեֆիս համար, չէ՞ որ մոդա է, քմահաճություն... (դառը ծիծաղ):

ՆԱՏԱԼԻԱ. (Ապշած) Դու կամ խելագարվել ես, կամ ծաղրում ես ինձ: Դու թե լուրջ ես խոսում և թե ինքդ ծիծաղում ես քո ասածի վրա, չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում:

ՀԵՐՍԻԼԵ. Ա՛հ, դժվար է հասկանալ իմ դրությունը, դժվար: Ձգալ է հարկավոր: Ձգալ այն, ինչ որ ես եմ զգում և հետո դատապարտել այն կանանց, որոնք իբր թե առանց լուրջ պատճառի թողնում են իրենց ամուսիններին ու հեռանում:

ՆԱՏԱԼԻԱ. Քանի գնում, այնքան միտքս խառնվում է ու ամեն բան մթնում է աչքերիս առջև: Հերսիլե, աղաչում եմ, մի՛ տանջիր ինձ, ասա ցավդ:

ՀԵՐՍԻԼԵ. Կասեմ մամա, կասեմ, դանակն արդեն ոսկրին է հասել, բայց առայժմ թող ինձ ու հեռացիր: Նա շուտով դուրս կգա իր կաբինետից, իսկ ես չեմ ուզում, որ դուք հանդիպեք իրարու: Անցիր երեխաների սենյակը, նրանք մենակ են: Ահա կարծեմ գալիս է, գնա մամա...

ՆԱՏԱԼԻԱ. (Գլխարկը սեղանի վրայից վերցնելով) Տեր ողորմած աստված, դու մեզ փրկես փորձանքից: (Անցնում է բուդուար):

ՏԵՍԻԼ 2

ՀԵՐՍԻԼԵ և ԱՆՏՈՆ

ԱՆՏՈՆ. (Գալիս է առանձնասենյակից: Տխուր է ու գրգռված) Ես գնում եմ նոտարի մոտ, թե Մարմարյանը գա, խնդրեցեք որ ինձ սպասե այստեղ, շուտով կվերադառնամ:

ՀԵՐՍԻԼԵ. (Չնայելով Անտոնի կողմը) Լավ:

ԱՆՏՈՆ. Այնուհետև, բարի եղեք տիկին գոնե առավոտները չնվագել, դուք ինձ խանգարում եք պարապել իմ ոչ-բանաստեղծական հաշիվներով:

ՀԵՐՍԻԼԵ. Լավ:

ԱՆՏՈՆ. (Հազիվ գրգիռը զսպելով) Դայակը տնից հեռացել է, ո՞վ կա երեխաների մոտ:

ՀԵՐՍԻԼԵ. Մայրս:

ԱՆՏՈՆ. (Հեգնական ծիծաղով) Մոր պարտականությունները տատն է կատարում: Երևի, այդ նոր մոդան էլ այն ազատամիտ տիկին Ալիմբարյանից եք սովորել:

ՀԵՐՍԻԼԵ. Ուրիշ ասելիք չունի՞ք:

ԱՆՏՈՆ. Ունիմ:

ՀԵՐՍԻԼԵ. Լսում եմ:

ԱՆՏՈՆ. Հրամայում եմ, որ այդ կնոջ ոտքն այլևս իմ տանը չլինի: Բավական է, որքան նա ձեզ կրթեց:

ՀԵՐՍԻԼԵ. Ես չեմ կարող իմ տան դռները փակել իմ ընկերուհու առջև:

ԱՆՏՈՆ. «Իմ տա՛ն դռները»: Դուք տուն չունեք, տիկին, ոչ:

ՀԵՐՍԻԼԵ. Այո:

ԱՆՏՈՆ. Այո: Այն առաջ էր, երբ ես փափագելով տիրանալ ձեր սրտին, տվել էի ձեզ ամեն բան: Այժմ տունն իմն է և միայն իմը, իսկ դուք... դուք նրա մեջ... տնտեսուհի եք առանց իրավունքների: Եվ դեռ այդ պաշտոնն էլ ձեզ համար, ինչպես տեսնում եմ, շատ է:

ՀԵՐՍԻԼԵ. Խլեցեք այն էլ, եթե շատ եք համարում:

ԱՆՏՈՆ. Եվ ձեզ համար ոչի՞նչ, դատարկ բան է, ասա …

ՀԵՐՍԻԼԵ. (Տատանվում է, հետո դրականորեն) Այո, ոչինչ…

ԱՆՏՈՆ. Դուք կին չեք, այլ հրեշ...

ՀԵՐՍԻԼԵ. Ինչո՞ւ: Որովհետև չե՞մ ստում և չե՞մ կարող ստել: Որովհետև շրթունքներս չե՞ն դավաճանում իմ սրտին: Որովհետև հանուն քո հարստության չե՞մ պղծում անկեղծությունն ու ճշմարտությունը...

ԱՆՏՈՆ. Անկեղծությունն ու ճշմարտությունը չարիք են, երբ խորտակում են մի ամբողջ ընտանիքի կյանքը…

ՀԵՐՍԻԼԵ. Այո, կեղծիքի, ստի և խաբեբայության վրա հիմնված կյանքը: Մի կյանք, որի արտաքինը ոսկեզօծ է, իսկ ներքինը՝ փտած...

ԱՆՏՈՆ. Կեցցեք, դուք բավական առաջադիմել եք ձեր անբարոյական աշակերտության մեջ: Դուք փտած եք համարում մի հիմունք, որ սրբագործված է աստվածային և մարդկային օրենքներով: Մի սկզբունք, որ միակ հաստատուն և ամուր պատվանդանն է մարդկային իմաստուն և բարոյական գոյության: Հապա ո՞րն է ձեր երևակայած կյանքի խարիսխը, ասացե՛ք:

ՀԵՐՍԻԼԵ. Սիրտը:

ԱՆՏՈՆ. Սի՛րտը, հա-հա-հա, սիրտը, որ հարյուրից իննսունուինը դեպքում թշնամի է առողջ բանականության:

ՀԵՐՍԻԼԵ. Եվ որը չի հպատակվում մարդկության շինծու օրենքներին և չի ենթարկվում նրանց բռնությանը:

ԱՆՏՈՆ. Կցանկանայի գիտենալ, ի՞նչ է թելադրում ձեզ ձեր սիրտն այսօր:

ՀԵՐՍԻԼԵ. Նա ինձ թելադրում է ասել, որ ներկա մեր դրությունը շարունակել այլևս անհնարին է և պետք է վերջապես, մի ելք գտնել ձեզ և ինձ ազատելու համար այս անվերջ գժտություններից:

ԱՆՏՈՆ. Բայց ո՞վ կամ ի՞նչը կտա ձեզ իրավունք ձեր կամքով խնդիրը լուծելու:

ՀԵՐՍԻԼԵ. Իմ անհատական ցանկությունը, իմ փափագը մարդկայնորեն ապրելու:

ԱՆՏՈՆ. Բայց չէ՞ որ ես ևս ունեմ անհատական ցանկության և մարդկայնորեն ապրելու փափագ:

ՀԵՐՍԻԼԵ. Ապրիր քո կամքով, ես քեզ չեմ խանգարում:

ԱՆՏՈՆ. (Բորբոքվելով) Հերսիլե, իմ սերը ձեզ վրա չազդեց, մի մոռանաք, որ կա մի ուժ, որ կարող է խորտակել ձեր ըմբոստությունը:

ՀԵՐՍԻԼԵ. Գիտեմ որն է այդ ուժը: Բռնությունը, որի օգնության արդեն սկսել եք դիմել:

ԱՆՏՈՆ. Ոչ, դեռ չեմ սկսել: Այն ինչ որ արել եմ մինչև այսօր ծաղիկներն են, իսկ պտուղը կճաշակեք շուտով:

ՀԵՐՍԻԼԵ. Արեք ինչ որ ուզում եք, այսուհետև ինձ համար բոլորը միևնույն է: (Ուզում է գնալ բուդուար):

ԱՆՏՈՆ. Սպասեցեք:

ՀԵՐՍԻԼԵ. (Կանգ առնելով) Ի՞նչ եք կամենում:

ԱՆՏՈՆ. (Գրգիռը զսպելով) Մոտեցեք ինձ: (Նայում է Հերսիլեին սուր հայացքով):

ՀԵՐՍԻԼԵ. (Նայելով Անտոնին) Ի՞նչ եք հրամայում, (Սարսափում է նրա հայացքից) Ա՜հ, (երեսը ձեռներով ծածկում է):

ԱՆՏՈՆ. Սարսափում եք այո: Այդ էիք կամենում, Սերն ատելի էր, այո, ծանր, անտանելի: Օ՜հ... (Գրգռվում է, զսպվում: Գրգիռը տեղի է տալիս կրքին: Նայում է նրան մի քանի վայրկյան կրքոտ հայացքով, ապա կիրքը տեղի է տալիս ինքնասիրության) Անեծք քեզ, սատանա, ես վախենում եմ ինքս ինձնից: (Արագ քայլերով գնում է նախասենյակի դռներով):

ՀԵՐՍԻԼԵ. (Հանդարտ, բայց ուժասպառ ընկնում է գահավորակի վրա):

ՏԵՍԻԼ 3

ՀԵՐՍԻԼԵ և ՆԱՏԱԼԻԱ

ՆԱՏԱԼԻԱ. Այժմ ես գիտեմ ինչ է կատարվում այստեղ: Ես բոլորը լսեցի: Հերսիլե, դու նրան չե՞ս սիրում:

ՀԵՐՍԻԼԵ. Եվ դու դեռ հարցնում ես:

ՆԱՏԱԼԻԱ. Չգիտեի:

ՀԵՐՍԻԼԵ. Վեց տարի շարունակ կռվել եմ ինքս ինձ հետ, վեց տարի ստիպել եմ ինձ գոնե մի թույլ սեր զգալ դեպի նա, չեմ կարողացել: Ինչու խելքս կորցրի և կյանքս կապեցի նրա հետ: Ախ, մամա, մամա չէիր կարող գոնե մի երկու տարի էլ պահել քո տանը մինչև որ միտքս կբացվեր, և ես հիմարաբար չէի ընկնի այս գեհենի մեջ: Մի՞թե այնտեղ չկար ինձ համար մի կտոր հաց:

ՆԱՏԱԼԻԱ. Համբերիր, համբերիր, այդ այնքան անսպասելի է ինձ համար, որ չգիտեմ ինչ ասեմ: Ասա, Անտոնը վատ մարդ է: Ինչո՞վ:

ՀԵՐՍԻԼԵ. Ախ, մամա, մի՞թե ամուսինն անպատճառ վատ մարդ պիտի լինի, որ չսիրես նրան: Բավական չէ, որ ես ամեն մի ժամ, ամեն մի րոպե զգում եմ, որ նա իմ կյանքի ընկերը չէ, որ ես խաբված եմ: Բավական չէ, որ նրա հետ կենակցելն ինձ համար հոգեկան տանջանքների մի շղթա է: Եվ մի՞թե ինձնից պիտի պահանջեն, որ այս շղթան կրեմ մինչև գերեզման միայն այն պատճառով, որ նրա ծայրը սրտիս խորթ մի մարդու ձեռքումն է: Անտոնը վատ մարդ չէ, այո, բայց օտար է իմ սրտին, մամա, և ավելի, քան օտար...

ՆԱՏԱԼԻԱ. Լսիր, աղջիկս, այժմ ես միտքդ հասկանում եմ և գիտեմ ինչու ես քեզ անբախտ համարում: Ականջ դիր: Ես քսան տարեկան էի, քեզ նման գեղեցիկ, կրակոտ, երբ ամուսնացա հորդ հետ: Այն ժամանակվա երիտասարդության մեջ նա աչքի էր ընկնում իր ոչ միայն գրավիչ արտաքինով, այլև խելքով ու սրախոսություններով: Ես սիրեցի նրան և այնքան երջանիկ էի, որքան նոր օծված մի թագուհի: Բայց (հուզումը զսպելով) շուտով կյանքիս հարսանիքը փոխվեց սգո օրերի: Տարին չէր լրացել, երբ սկսվեցին ինձ համար այնպիսի սև օրեր, որոնց կարող է քաշել միայն խաբված, դավաճանված և ուրիշների ծաղրին ու ծանակին ենթարկված մի կին:

ՀԵՐՍԻԼԵ. (Զարմացած ու վշտացած) Մամա, մի՞թե հայրս:

ՆԱՏԱԼԻԱ. Այո, սիրելիս, հայրդ, այդ իսկապես շատ բարի, բայց և շատ թուլամորթ մարդը: Հերսիլե, մի՞թե ես չգիտեմ ինչու չես հավանում Անտոնին: Այո, նա գեղեցիկ չէ, լեզվանի չէ, նաև մի քիչ հասակավոր քո համեմատ, մի խոսքով ոչ մարմնով, ոչ հոգով քո ընկերը չէ, բայց սիրելիս, այդ բոլորը դատարկ բաներ են համեմատած այն մեծ արժանավորության հետ, որ ունի Անտոնը: Հերսիլե, նա քո պատիվը ոտնատակ չի անում, նա քեզ չի դավաճանում,

ծաղրելի չի դարձնում իր սիրուհիների աչքում, իսկ թե ինչ արժե այս — ես գիտեմ: Քանի -քանի անգամ տխուր գիշերները մեն-մենակ չորս պատերի մեջ նստած, արտասուք եմ թափել և ճակատագիրս անիծել: Ես հոգով ցանկացել եմ, որ իմ ամուսինը լիներ տգեղ, ծեր, մինչև անգամ հիմար, միայն թե ինձ և միմիայն ինձ ճանաչեր կանանց մեջ:

ՀԵՐՍԻԼԵ. Խե՜ղճ մամա, խե՜ղճ մամա:

ՆԱՏԱԼԻԱ. Եվ ահա մի այդպիսի գիշեր ես ուխտեցի տալ քեզ մի կոպիտ շինականի, մի հետին արհեստավորի, միայն թե գիտենամ, որ նա քեզ չի դավաճանիր: Ասում են, որ ես կաշառվել ու հրապուրվել եմ Բեգմուրյանի հարստությամբ, բայց երդվում եմ եղբորդ արևով, քո արևով, Հերսիլե, այդ ճիշտ չէ: Ես սիրել եմ նրա անձնավորությունը: Երբ առաջին անգամ նրան տեսա, սիրտս ինձ ասաց, «տուր այդ մարդուն քո աղջկան, նա լավ ընտանետեր կլինի, նա երբեք չի դավաճանի իր կնոջը»: Եվ այսօր ես կարծում եմ, որ չսխալվեցի: Այնպես է, թե՞ չէ: Վեց տարի է ամուսնացել ես. ասա, երբևէ Անտոնը դավաճանել է քեզ կամ հափշտակվել մի ուրիշ կնոջով:

ՀԵՐՍԻԼԵ. Օ՜օ եթե այդքանը միայն բավական լիներ նրան սիրելու համար, ես չէի ըմբոստանալ: Մամա, մամա ինչի՞ս է հարկավոր նրա հավատարմությունը, երբ ես չեմ սիրում նրան և չեմ կարող սիրել երբեք, երբեք:

ՆԱՏԱԼԻԱ. Ինչիդ է հարկավոր, օ՜օ, եթե հավատարիմ չլիներ, կիմանայիր ինչիդ է հարկավոր: Մարդ այն ժամանակ է միայն գնահատում իր ունեցածը, երբ զրկվում է նրանից:

ՀԵՐՍԻԼԵ. Գուցե այդպես է, չգիտեմ, բայց հավատա, մամա, երբեմն հոգուս խորքում ցանկանում եմ, որ նա իմ մեջ շարժի խանդի զգացում, գուցե այդպիսով կարողանա սիրտս տաքացնել, բայց վեց տարի է նա ինձ վրա սիրահարված է խելագարի պես և այդ սերն ինձ համար սեր չէ, այլ, այլ ինչպես ասեմ, մի տեսակ պատիժ, մի անտանելի բեռ հոգուս վրա:

ՆԱՏԱԼԻԱ. Հերսիլե, դու չգիտես ինչ ես ասում, դու խելքդ կորցրել ես: Առաջին անգամն եմ լսում, որ մի կին կարող է տանջվել իր ամուսնու սիրուց, այն էլ այնպիսի մարդու, որ նրան շրջապատել է կյանքի բոլոր բարիքներով: Հերսիլե, վախենում եմ ասել, չլինի թե աչքդ կշտացել է ամուսնական կյանքից և ուզում ես քեզ համար մի ռոման ստեղծել, ինչպես այդ անում են անբարո յա կան կանայք:

ՀԵՐՍԻԼԵ. (Ձայրանալով) Մամա, լռիր: Ինչպես տեսնում եմ վերջապես, ստիպված եմ ասել քեզ այն, ինչ որ չէի կամենում ասել: (Ձայնը ցածրացնելով) Մամա, ես զզվում եմ Անտոնից, հասկացա՞ր, զզվում եմ:

ՆԱՏԱԼԻԱ. (Ցնցվելով) Զզվո՜ւմ ես:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, ես մարմնավոր զզվանք եմ զգում դեպի նա՛:

ՆԱՏԱԼԻԱ.Ահա թե ի՜նչ:

ՀԵՐՍԻԼԵ. Ամեն անգամ, երբ նա մոտենում է ինձ և շինականի պինդ ձեռներով գրկում է, երբ մանավանդ համբուրում է, մարմնովս սարսուռ է անցնում: Սկզբում դեռ ոչինչ, մի կերպ զսպում էի ինձ, իսկ հետո, հետո օh, աստված՝ իմ... (Երեսը ծածկում է ձեռներով):

ՆԱՏԱԼԻԱ Բայց դու վեց տարի ապրել ես նրա հետ, դու նրանից երեխաներ ունես…

ՀԵՐՍԻԼԵ. Ապրել եմ այո, ապրել եմ ուրիշների աչքում, իսկ ինձ համար դա ապրուստ՝ չի եղել, այլ զզվանք և տառապանք: (Հանդարտ լալիս է):

ՆԱՏԱԼԻԱ. (Մտատանջությամբ) Մարմնավոր զզվանք, այդ ուրիշ բան է, ես չեմ զգացել, բայց լսել եմ, որ դրա դեմ դեղ չկա: Լավ, Հերսիլե, մի լար, արտասուքը չի օգնիր: Գնանք երեխաների մոտ, նրանք քեզ կմխիթարեն, գնանք: (Զանգակի ձայն): Ահա, գալիս են... գնանք, երեսդ լվացիր, հագնվիր... Հերսիլեին զրկելով տանում է բուդուար:

ՏԵՍԻԼ 4

ԱՆՏՈՆ և ՄԱՐՄԱՐՅԱՆ

ԱՆՏՈՆ. (Գալիս է նախասենյակի դռներով Մարմարյանի հետ) Շարունակիր, ինչու լռեցիր: (նստում է գահավորակի վրա) Շարունակիր, այն ի՞նչ ճշմարտություն է, որի մասին իբր թե ես չեմ համարձակվում մտածել:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Նայելով շուրջը) Դա այն է, որ ով ուզում է իր ամուսնուց երջանկություն վայելել, պետք է նախ ինքը երջանկացնելու միջոց ունենա:

ԱՆՏՈՆ. Ասել է, ես չունեմ միջոցը, այո՞:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Նստում է) Գուցե ունես, բայց ոչ Հերսիլեի պես մի կնոջ համար:

ԱՆՏՈՆ. Ինչո՞ւ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Այն հասարակ պատճառով, որ քո և նրա մեջ կա անանցանելի անդունդ:

ԱՆՏՈՆ. Դու ակնարկում ես իմ տարի՛քը: Այո, տասնութ տարով մեծ եմ նրանից, բայց մի՞թե դա կնոջ ու տղամարդու մեջ մի զարհուրելի անդունդ է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Այդ չէ միայն, Անտոն, այդ չէ, Մենք սովորել ենք թութակի պես կրկնել թե կինը տղամարդուց հետ է մնացել բանականությամբ և ձգտումներով: Գուցե այդ ճիշտ է, բայց քո օրինակը հակառակն է ցույց տալիս: Նայիր քեզ. և տես ինչ ես: Որպեսզի մարդ հավատա, որ դու բարձր ուսում ստացած և կրթված մարդ ես, պետք է միշտ համալսարանական նշանը կրծքիդ վրա և դիպլոմը գրպանումդ ունենաս: Այնինչ Հերսիլեի մտավոր զարգացման և բանականության նշանը նրա ճակատին է դրոշմված: Ահա քանի տարի է քո ձեռքին չեմ տեսել մի լուրջ դիրք: Քո ընթերցանության սիրած նյութը կառավարչիդ հաշիվներն են կամ զանազան պայմանագրերդ: Իսկ նա…նա շարունակ կարդում է, շարունակ մտածում և իր միտքը նրբացնում: Հաճախ ես վկա եմ եղել ձեր վեճերին, և միշտ հաղթությունը նա է տարել: Իսկ դու միայն մի զենք ես ունեցել — ծաղր: Նա միշտ թռել է դեպի վեր, դու՝ միշտ աշխատել ես նրա թևերը կտրել և երկրին կպած պահել: Ախ, Անտոն, Անտոն, գիտես, եթե ես լինեի քո տեղն ինչ կանեի: Էվալլա, կտայի նրան կատարյալ ազատություն: Թոզ գնար, կրթեր ու զարգացներ իր երաժշտական ձիրքը: Երկուսից մեկը, կամ նա կդառնա երաժշտուհի, այն ժամանակ, ինչո՞ւ չէ, ես կխոնարհվեի նրա առջև, կամ ոչինչ չէր դառնալ, կհիասթափվեր, և այն ժամանակ նա ինքը կխոնարհվեր իմ վեհանձնության առջև և հավիտյան պարտական կզգար իրան:

ԱՆՏՈՆ. Շարունակիր, շարունակիր...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Բայց դու միշտ կրկնել ես և կրկնում ես մի տափակ միտք. «Կինը ծնված է ամուսին և մայր լինելու համար»: Էհ, դիցուք թե այդպես է: Բայց ասա խնդրեմ, ի՞նչ է եղել այս վեց տարին քո դրությունը: Մի օր, գոնե մի ժամ համոզված եղե՞լ էս, որ Հերսիլեն քեզ է պատկանում հոգով ու սրտով, իր ամբողջ էությամբ, ասա՞: Ոչ: Դու ամեն վայրկյան դողալով մտածել ես, թե ահա, ահա պիտի գա ավելի արժանավորը և խլի նրան քո ձեռքից: Էվալլա, և դու երևակայում էիր, որ դա ընտանեկան կյա՞նք է, երջանկություն: Ողորմելի մարդ, Իսկ ա՞յժմ, այժմ ի՞նչ ես անում, ասա խնդրեմ: Այդ ի՞նչ վարմունք է: Փակել ես մի նրբազգաց և խելոք կնոջ չորս պատերի մեջ և ինչպես բարբարոս, տանջում ես նրան... Ինչո՞ւ, ի՞նչ նպատակով:

ԱՆՏՈՆ. Ես նրա հետ խիստ եմ վարվում մեր փոխադարձ օգտի համար: Ա՛հ, ես գիտեմ, որ դա ուղեղի ժամանակավոր շփոթություն է, շուտով կանցնի, և նա խելքի կգա...

ՄԱՐՄԱՐՅԱՆ, Եվ դու հավատո՞ւմ ես այդ բանին, հավատո՞ւմ ես, որ կգրավես երբևէ նրա սիրտը:

ԱՆՏՈՆ. Սիրտը գուցե ոչ, բայց միտքը կգրավեմ և կենթարկեմ իմ իշխանությանը, որովհետև խելքի գալով նա կհասկանա, որ երեխաների մայր է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Երեխաներ, երեխաներ, Ահա թե ինչի վրա ես հույսդ դրել: Ախ, եսամոլներ: Դուք կուրացնում եք միամիտ աղջկանց, ամուսնանում եք նրանց հետ: Հետո շտապում եք նրանց վզին փաթաթել երեխաներ: Այնուհետև, երբ դեռահասը հասունանում է, աչքերը բաց է անում ուզում է ապրել իր խելքի ու սրտի թելադրությամբ, սկսում եք եզուիտաբար աղաղակել. «այդ աններելի է, ամոթալի, դու երեխաներ ուսիս, պատվի զգացում, պարտականություններ»... չգիտեմ էլ ինչ: Էվալլա, իսկ սեփական կյա՞նքը, հարցնում եմ քեզ, սեփական կյա՞նքը: Նա ոչինչ չարժե՞, ոչի՞նչ: Նա պետք է միշտ աղավաղվի՞, ոտնատակ լինի եսամոլների համար:

ԱՆՏՈՆ. Ահ, բավական է, թող ինձ (Վեր է կենում): Դու չգիտես ինչ է կատարվում այստեղ. (Խփում է սրտի կողմին) Իլիա, չգիտես: Այո, ճիշտ է, որ Հերսիլեին ընտրելիս ես ղեկավարվել եմ էգոիստիկ զգացումով, ընտրել եմ նրա գեղեցկությունն ու երիտասարդությունը: Ես վաղորոք մտքումս պարծեցել եմ ուրիշների առջև, որ պիտի ունենամ փայլուն կին: Բայց այժմ, այժմ, Իլիա, երդվում եմ պատվովս, կցանկանայի, որ նա լիներ տգեղ կամ ծեր: Այո, այո, կցանկանայի, որ մի աներևույթ ձեռք հանկարծ այդ սիրուն դեմքի վրա դներ մի բիծ, մի արատ, որպեսզի, որպեսզի...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Որպեսզի նա ոչ ոքի այլևս դուր չգար: Հասկանում եմ:

ԱՆՏՈՆ. Ո՛չ, ոչ, դու դեռ բոլորը չգիտես: Լսիր, Իլիա, (Բռնելով Մարմարյանի ձեռքը ձայնը ցածրացնում է) ես քեզ կհայտնեմ մի գաղտնիք: Սուս, թող ոչ ոք այս չիմանա: (Խորհրդավոր) Այդ դժոխային միտքը իմ գլխում ծագում է, գիտե՞ս երբ: — Խուլ գիշերները, երբ նրա ննջարանում տիրում է մեռելային լռություն, Սպասիր, այդ երբ էր, այո, երեկ չէ մեկել գիշերը: Ես մեն-մենակ անցուդարձ էի անում այստեղ, քնից զրկված: Նա այնտեղ էր: (Ցույց է տալիս բուդուարը) Ես մոտեցա դռներին, բաց արի կիսով չափ և մտիկ արի գողնովի, որովհետև, գիտես Իլիա, այժմ իմ կնոջը միայն գողուվի կարող եմ նայել: Նա պառկած էր դիվանի վրա սպիտակ հագուստով: Նրա շքեղ մազերը սիրուն գլխիկի շուրջը — այո, այո, շատ սիրուն գլխիկ ունի — կազմել էին սքանչելի պսակ: Բայց նա ինձ համար օտար էր, Իլիա, բոլորովին օտար: Ինձ թվում էր, որ ես նոր եմ տեսնում նրան, իմ օրինական կնոջը: Ես հիացած էի նրա գեղեցկությամբ այնպես, ինչպես երբեք հիացած չեմ եղել: Լսիր, լսիր: հանկարծ ինձ պաշարեց մի չար ոգի: (Ձայնն ավելի ու ավելի ցածրացնում է): Նրա գեղեցկությունն ու երիտասարդությունը զարթեցրին իմ մեջ սարսափելի նախանձ (շարժելով նրա ձեռը) լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես: Այո, այո, նրա գեղեցկությունն ինձ թվաց մի չար ոսոխ: Այնտեղ, իմ կաբինետում, սեղանիս մեջ կա մի հեղուկ: Բավական է մի կտոր բամբակ թաթախել նրա մեջ, մի անգամ քսել նրա սիրուն ունքերին և... չար ոսոխն այլևս գոյություն չի ունեա Իլիա, հասկացա՞ր միտքս... (Բաց թողնելով Մարմարյանի ձեռքը վառ աչքերով նայում է նրան, ինքն իր ասածից սարսափած):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Ապշած նրան է նայում ու սարսափում) Անտոն, քո մեջ նստած է մի սարսափելի գազան, լսել անգամ չեմ ուզում այդպիսի բաներ...

ԱՆՏՈՆ. (Շնչահատ) Այո, նա կամ ինձ պետք է պատկանի, կամ ոչ ոքի, լսո՞ւմ ես, ոչ ոքի...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Նա ոչ ոքի չի պատկանում և հազիվ թե երբևէ...

ԱՆՏՈՆ. Դու կարծում ես, դու համոզվա՞ծ ես...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Կարող եմ կյանքովս և պատվովս երաշխավորել: Հերսիլեն այժմ պատկանում է միայն ինքն իրեն, իր հոգու խորությանը...

ԱՆՏՈՆ. Բայց այդ խորության մեջ նա կարող է գտնել իր բարոյականության գերեզմանը... Կինը հոգեկան այդ դրության մեջ վտանգավոր է իր ամուսնու պատվի համար... Իլիա, պետք է փրկել նրան անկման վտանգից...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Բայց մտածել այդպիսի մի վայրենի գործողության մասի՞ն, խլել նրանից աստվածային տո՞ւրքը, այլանդակել.,.. Դեհ, բավական է, ես տեսնում եմ, որ դու սկսում ես ցնորվել...

ԱՆՏՈՆ. Ցնորվե... Այո, կարող է պատահել: (Արտասվախառն ձայնով) Բայց նայիր այս գազանի հոգու հակառակ կողմին, Իլիա, և տես այնտեղ ինչ կա: Մի քանի րոպե անցած, ես գազանս, դարձա բոլորովին ուրիշ մարդ: Ես դարձա մի խեղճ, ողորմելի էակ, Իլիա: Եվ այն ժամանակ իմ մեջ հղացավ ցանկություն — մոտենալ նրան, չոքել նրա առջև, ջերմ արտասուքով ներումն խնդրել: Ես նրանի՞ց. դա մինչև անգամ ծիծաղելի է, չէ՞. ներումն խնդրել նրանից, որի առջև մեղավոր եմ միայն իմ անհուն սիրով: Իլիա, Իլիա, լինել այսքան նրան մոտիկ և այսքան հեռու նրանից: Սիրել սեփական կնոջդ, որի հետ ապրել ես վեց տարի, սիրել խելագարի պես և չտիրել նրան — դա ավելի քան դժբախտություն է, դա թշվառություն է: (Լռություն): Բայց ես տղամարդ եմ, չպիտի թույլ տամ ինձ ընկճվել:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Այսպես, թե այնպես, պետք է վերջ տալ այդ դրությանը, ապա թե ոչ, ինչպես տեսնում եմ, դու հոգեպես հիվանդանում ես.... Բայց առայժմ գնանք դուրս, անցնենք մի փոքր դեսուդեն, որ մտքերդ ցրվեն: Մաքուր օդը կազդի քեզ վրա բարերար կերպով:

ԱՆՏՈՆ. Ճիշտ ես ասում, գնանք... (Դիմում է նախասենյակ, — Մարմարյանը հետևում է նրան: Բուդուարից դուրս է գալիս Նատալիան):

ՏԵՍԻԼ 5

ՆՈՒՅՆՔ և ՆԱՏԱԼԻԱ.

ՆԱՏԱԼԻԱ. Անտոն:

ԱՆՏՈՆ. (Կանգ է առնում) Ի՞նչ եք կամենում:

ՆԱՏԱԼԻԱ. Սպասիր, ես հիմա գիտեմ ինչ է պատահել, բայց բոլորը դատարկ բաներ են: Հաշտվեցեք:

ԱՆՏՈՆ. Ես նրա հետ չեմ կռվել:

ՆԱՏԱԼԻԱ. Գիտեմ, դու մեղավոր չես: Նա է մի քիչ ջահելություն անում: Երեխա է, ոչինչ: Ծիծաղիր նրա երեսին, ամեն բան կվերջանա:

ԱՆՏՈՆ. Լսո՞ւմ ես, Իլիա, ինձ առաջարկում են ծիծաղել, ինձ. որ ամբողջ վեց տարի աշխատել եմ նրա կյանքը ծիծաղ և ուրախություն դարձնել:

ՆԱՏԱԼԻԱ. (Դեպի բուդուարը) Հերսիլե, եկ այստեղ: Դուրս եկ, լավ, խնդրում եմ: (Անտոնին) Դե, արի, գնա ինքդ խնդրիր: (Անտոնը ինքնասիրությունից դրդված չի գնում): Չե՞ս ուզում: (Մարմարյանին) Դուք խնդրեցեք, Իլիա Մարտինիչ, նա ձեզ շատ է հարգում:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Մոտենում է բադուարին) Տիկին Հերսիլե, մի րոպե... (Հերսիլեն դուրս է գալիս և Մարմարյանին բարևում է):

ՏԵՍԻԼ 6

ՆՈՒՅՆՔ և ՀԵՐՍԻԼԵ

ՀԵՐՍԻԼԵ. Ի՞նչ եք կամենում, Իլիա Մարտինիչ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Թեև ես, իբրև երրորդ անձ, ավելորդ եմ, բայց ձեր մեջ տեղի ունեցող ընդհարումներն ինձ հայտնի են: Իբրև այս տան անկեղծ բարեկամ, կփափագեի այստեղ խռովություններ չտեսնել: Բարեկամս և ընկերս տանջվում է...

ԱՆՏՈՆ. Իլիա...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ինչո՞ւ չասել ճշմարիտը, մի՞թե ինքը չգիտե: Տիկին, կան դրություններ, որ մեզանից են կախված դարձնել նրանց կոմեդիա, թե դրամա:

ՀԵՐՍԻԼԵ. Ես այժմ կարո՞ղ եմ հեռանալ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Զարմացած) Ո՞ւր:

ՀԵՐՍԻԼԵ. Այս տան բազմաթիվ սենյակներից մեկը: Փակվել այնտեղ, ոչ ոքի երեսը չտեսնել, ոչ ոքի հետ չխոսել, ոչ ոքի:

ԱՆՏՈՆ. Ա՞յդ է ձեր փափագը:

ՀԵՐՍԻԼԵ. Այո:

ԱՆՏՈՆ. Իլիա, անցիր մի որպե իմ կաբինետը: Մայրիկ, հեռացեք խնդրեմ: (Մարմարյանն անցնում է առանձնասենյակ, Նատալիան բուդուար):

ՏԵՍԻԼ 7

ՀԵՐՍԻԼԵ և ԱՆՏՈՆ

ԱՆՏՈՆ. Ի՞նչ ես ցանկանում, վերջապես, ի՞նչ է քո պահանջը, ասա պարզ, կտրական, որ ես էլ իմանամ:

ՀԵՐՍԻԼ. Բաժանվել:

ԱՆՏՈՆ. Բաժանվե՞լ, լավ: Բայց չէ՞ որ մի հայտնի պատճառ պետք է լինի: Դավաճանե՞լ եմ քեզ. արդյոք խաբե՞լ, քաղցա՞ծ պահել: Հարբեցող եմ արդյո՞ք, գո՞ղ, ավազա՞կ, անբարոյակա՞ն, թե չե՞մ կարողանում կերակրել ու պահել քեզ:

ՀԵՐՍԻԼԵ. Այդ բոլորը ոչինչ, այստեղ (խփելով սրտին) եղածի համեմատ:

ԱՆՏՈՆ. Բայց ի՞նչ կա այդտեղ, ասա, իմանամ...

ՀԵՐՍԻԼԵ. Ահ, եթե մինչև հիմա չես զգացել ու իմացել, այսուհետև բացատրելն ավելորդ է:

ԱՆՏՈՆ. Լավ, չես սիրում0, իմացա... Մի սիրիր, չեմ կարող ստիպել, բայց շարունակիր մնալ կինս, հասկանո՞ւմ ես, կինս, երեխաներիս մայրը: Ի՞նչ արած, հո բոլոր կանայք իրենց մարդուն չեն սիրում:

ՀԵՐՍԻԼԵ. Առաջ ես անտարբեր էի դեպի քեզ, հետո սկսեցի ատել, այնուհետև զզվել:

ԱՆՏՈՆ. (Ցնցվելով) Զզվե՞լ..

ՀԵՐՍԻԼԵ. Իսկ այժմ վախենում եմ քեզանից..

ԱՆՏՈՆ. Վախենո՞ւմ ես...

ՀԵՐՍԻԼԵ. Այո: Մի՞թե մոռացել ես: Աստված իմ, այն ի՞նչ էր... Ես պառկած էի այնտեղ (Ցույց է տալիս բուդուարը) փակ աչքերով: Դու ներս մտար: Կարծում էիր թե քնած եմ: Նայեցի քո դեմքին: Աչքերդ վառվել էին ածուխի կտորների պես. շրթունքներդ կպել էին ատամներից և դողդողում էին: Քո ամբողջ կերպարանքն արտահայտում էր գազանություն: Ի՞նչ էիր մտածում անել — չգիտեմ, բայց քո դեմքի վրա կարդացի սոսկալի դիտավորություն: Ես գոռալով ոտքի կանգնեցի, դու նայեցիր ինձ բռունցքներդ սեղմած. ատամներդ կրճտելով և հեռացար ուրվականի պես: Ոչ, ոչ, ես սարսափում եմ մտաբերելիս: Չեմ կարող, չեմ կարող, եթե մի շաբաթ էլ շարունակվի այս դրությունը, կխելագարվեմ: Իսկ ես չեմ ուզում այս, որովհետև կյանքը համարում եմ աստվածային անփոխարինելի պարգև:

ԱՆՏՈՆ. Դու վայելում էիր կյանքի բոլոր հրապույրները, միայն չգնահատեցիր ինձ: Հերսիլե, մի ստիպիր ինձ ավելի չար մարդ դառնալու, խելքի եկ:

ՀԵՐՍԻԼԵ. Ես զզվում եմ կեղծիքից ու ստից:

ԱՆՏՈՆ. Դարձյա՞լ նույնը:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, և միշտ:

ԱՆՏՈՆ. (Գրգռվելով) Ինչպես տեսնում եմ, անբարոյականության սերմը քո մեջ եղել է ի բնե, իսկ այդ լիրբ կինը միայն զարգացրել է նրան: (Հերսիլեն ուզում է հեռանալ բուդուարը) Սպասիր, այդ չէ քո ճանապարհը (ցույց է տալիս նախասենյակը) ահա...

ՀԵՐՍԻԼԵ. Առաջ եմ վճռել, (քայլերն ուղղում է դեպի բուդուար):

ԱՆՏՈՆ. Ոչ: Ես քեզ թույլ չեմ տա տեսնվել նրանց հետ:

ՀԵՐՍԻԼԵ (Նայելով նրան ատելությամբ): Զուր են քո բոլոր սպառնալիքները... (ուզում է գնալ դեպի բուդուար):

ԱՆՏՈՆ. (Միանգամայն ինքն իրեն կորցնելով) Ուրեմն ոչ այս է քո ճանապարհը, ոչ այն: Ահա նա, (ցույց է տալիս լուսամուտը) Ես կշպրտեմ քեզ փողոց, ինչպես մի կեղտոտ շոր: (Հարձակվում է վրեն):

ՀԵՐՍԻԼԵ. (Աղաղակում է) Ահ...

ՆԱՏԱԼԻԱ. (Ներս է մտնում բուդուարից) Անտոն…

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Ներս է մտնում նախասենյակից) Անտոն...

(Անտոնն ինքն իր իր դիտավորությունից սարսափած, կանգ է առնում, աշխատելով ուշքը ժողովել: Հերսիլեն ընկել է մոր գիրկը):

ԱՆՏՈՆ. Տար, հեռացրու ինձ այստեղից, Իլիա: Ես հանցանք կգործեմ. (Մարմարյանը բռնում է նրա թևից և տանում նախասենյակ):

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Նույն հյուրասենյակը՝ նույն կահ-կարասիով; Դաշնամուրի վրա դրած է Անտոնի գլխարկը: Հետզհետե մթնում է: Վարագույրը բարձրանալիս Մարմարյանը նիհրած է բազկաթոռի վրա,

երեսը դեպի ձախ պատը, ձեռնափայտը քովը դրած: Մի քանի վայրկյան անցած՝ ներս է մտնում Վիրժինեն, վառ լամպարը դնում է գահավորակի առջևի սեղանի վրա, պատրույգը բարձրացնում է: Բեմը լուսավորվում է:

ՏԵՍԻԼ 1

ՄԱՐՄԱՐՅԱՆ և ՎԻՐԺԻՆԵ

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Սթափվելով, գլուխը բարձրացնում է և աջ ու ձախ նայում, տեսնելով Վիրժինեին) Ա՜ա, այդ դո՞ւ ես: Լուսացել է արդեն:

ՎԻՐԺԻՆԵ. (Ժպտում է) Մթնում է, ոչ թե լուսացել է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Նայելով ժամացույցին) Ա՜ա, ճշմարիտ, ես այնպես պինդ էի քնել, որ կարծում էի գիշեր է:

ՎԻՐԺԻՆԵ. Երեկոյան յոթ ժամն է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Պարոնդ տնից չի՞ դուրս եկել:

ՎԻՐԺԻՆԵ. Ոչ, դեռ իր կաբինետումն է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Բեր ինձ համար մի սիֆոն:

ՎԻՐԺԻՆԵ. Աչքիս վրա: (Գնում է սեղանատուն):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Ձեռնափայտը վերցնելով, վեր է կենում, մոտենում է Անտոնի առանձնասենյակի դռներին, բաց է անում, զգույշ նայում է ներս, նորից ծածկում և. հետ դառնում) Նա էլ ինձ պես բազկաթոռի վրա է քնել... Թող քնի, մի փոքր հանգստանա: Հիմար կյանք...

ՎԻՐԺԻՆԵ. (Բերում է սեղանատնից սիֆոն ու բաժակ և դնում սեղանի վրա) Լցնե՞մ բաժակը, Իլիա Մարտինիչ,..

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Հիարկե, (Վիրժինեն բաժակը լցնում է, տալիս է նրան, խմում է ու բաժակը դնում սեղանի վրա, տեսնելով, որ Վիրժինեն նայում է նրան հետաքրքիր դեմքով) Ինչո՞ւ ես այդպես մտիկ անում երեսիս:

ՎԻՐԺԻՆԵ. Իլիա Մարտինիչ... (Չի համարձակվում շարունակել):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Նու:

ՎԻՐԺԻՆԵ. Սիրտս կտրատվում է նրան նայելիս...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ո՞ւմ:

ՎԻՐԺԻՆԵ. Տիրուհուս: Նստած իր սենյակում, մի գլուխ լաց է լինում ու համբուրում երեխաներին: Ոտքի վրա չորացել ու ցամաքել է, ոչինչ նրան չի հետաքրքրում... Էն աստվածը...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Կարծեմ, պարոնդ ավելի վատ դրության մեջ է...

ՎԻՐԺԻՆԵ. Ոչ, մի ասեք, Իլիա Մարտինիչ... ճշմարիտ է, պարոնս էլ տանջվում է, բայց տիրուհիս, ախ աստված... (արտասուքը սրբելով) Մի՞թե կարելի է, Իլիա Մարտինիչ, — պարոնն օր չի անցնում, որ… (նայում է աջ ու ձախ երկյուղով):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ի՞նչ.

ՎԻՐԺԻՆԵ. Ծեծում է... Էն աստվածը...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Մեկուսի) Ես այդ չգիտեի... (Վիրժինեին) սուտ մի ասա, անպիտան:

ՎԻՐԺԻՆԵ. Էն աստվածը, Իլիա Մարտինիչ, աչքերովս եմ տեսել... (Հանդարտ լալիս է):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Լռիր, աղջի: Գնա, քո բանը չէ... (Նախասենյակից զանգակի ձայն) Զանգակ են տալիս, գնա դռները բաց արա... Բայց ոչ ոքի ոչ մի խոսք, հասկանմո՞ւմ ես, ոչ ոքի...

ՎԻՐԺԻՆԵ. Իհարկե, ուրիշներին չեմ ասիլ... (Գնում է նախասենյակ):

Մարմարյանը ընկնում է մտատանջության մեջ: Նախասենյակից ներս են մտնում Սոլոմոնն ու Նատալիան: Վիրժինեն գալիս է, սիֆոնն ու բաժակը տանում է սեղանատուն: Նատալիան տխուր դեմքով գլխով բարևում է Մարմարյանին և. անմիջապես անցնում է բուդուար:

ՏԵՍԻԼ 2

ՍՈԼՈՄՈՆ և ՄԱՐՄԱՐՅԱՆ

ՍՈԼՈՄՈՆ. (Սեղմելով Մարմարյանի ձեռքը, նստում է բազկաթոռներից մեկի վրա, գլխարկը դնելով սեղանի վրա): Ի՞նչ նորություն կա:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ինչ պիտի լինի, որդը որոճում է երկուսի էլ սիրտը, իսկ ես հսկում եմ նրանց, ինչպես պահնորդ:

ՍՈԼՈՄՈՆ. Բայց այդպես շարունակել չի կարելի:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Այո, իհարկե չի կարելի..,. Բայց ի՞նչ պիտի անել, ձեր աղջկա համառությունը անսահման է, անհասկանալի և միանգամայն ոչ խելացի...

ՍՈԼՈՄՈՆ, Գուցե, բայց ստիպել նրան սիրել չսիրած մարդուն անկարելի է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ստիպեք, իհարկե չի կարելի, իսկ համոզել, որ հանուն զավակների պարտավոր է հպատակվել իր ճակատագրին՝ կարելի է: Եվ այս ձեր պարտականությունն է, պարոն Սուրաթյան... Այո, ձեր պարտավորությունն է... Դուք հայր եք...

ՍՈԼՈՄՈՆ. Ես չեմ կարող պահանջել իմ աղջկանից անել այն, ինչ նա համարում է ոճիր — ստել և կեղծել...

ՄԱՐՄԱՐՅԱՆ, Բայց չէ՞ որ Հերսիլեն մայր է:

ՍՈԼՈՄՈՆ. Այո, բայց միևնույն ժամանակ նա և մարդ է առանձին անհատ ինքնուրույն հոգի: Թող ինչ ուզում է խոսի ձեր հասարակական կարծիքը, ոչ ոք, հասկանո՞ւմ եք, ոչ ոք, մի ուրիշը, նույնիսկ հարազատ հայրը, չունի իրավունք զավակներից մարտիրոսություն պահանջելու որևէ պարտականության համար: Ես ինքս կենսախինդ մարդ եմ և ընդունակ չեմ որևէ զոհաբերության հանուն ձեր առօրյա առաքինության: (Պաուզա) Դուք գիտե՞ք, որ ձեր բարեկամն այժմ չի ամաչում գոռալ իմ աղջկա վրա, հայհոյել անգամ նրան: Աա, մի աշխատեք հերքել, բոլոր ծառաները գիտեն այդ...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Հուսահատությունը նրան դարձրել է ներվային և դյուրագրգիռ... Նա սիրում է ձեր աղջկան խելագարի պես և այն միտքը, թե կարող է մի օր զրկվել նրանից, տանջում է նրան գիշեր-ցերեկ: Ես մինչև անգամ վախենում եմ նրա ուղեղի համար: Նա ընդունակ է ամեն բանի, ահա ինչու ես հետևում եմ նրան քայլ առ քայլ, ստվերի պես, մոռացած իմ

հիվանդությունը: Նա դարձել է մտախոհ, մռայլ և այնքան կասկածամիտ, ինձ էլ չի հավատում անգամ...

ՍՈԼՈՄՈՆ. Ամեն ինչ կարող է անել, բացի կասկածելուց: Հերսիլեն այն անբախտ կանանցից է, որոնց համար խաբելն ու կեղծելը ամենածանր հանցանքն է: Նա դեռ ոչ ոքի չի սիրում և եթե սիրի էլ, ոչ ոքից չի թաքցնիլ և չի վախենալ.,. Ահա ինչու, գոնե ես իմ կողմից վճռել եմ թողնել ամեն ինչ իր կամքին: Կամենում է, թող հպատակվի իր ճակատագրին, չի կամենում թող...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Թող ձգի երեխաներին ու հեռանա, այո՞...

ՍՈԼՈՄՈՆ. Իլիա Մարտինիչ, երեխա մի լինեք... Ոչ մի քարասիրտ մայր իր զավակներից առանց խոր պատճառի չի բաժանվիլ... Եվ դուք չպիտի քար արձակեք Հերսիլեի հետևից, եթե նա մի օր հեռանա այս տնից... Վերջապես, կան բաներ, որոնց մասին չեմ կարող պարզ խոսել...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Նայելով Սոլոմոնին խորորդավոր) Ես այդ գիտեմ, գուշակում եմ...

ՍՈԼՈՄՈՆ. Գիտեք, ուրեմն լռեցեք...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Ականջ դնելով դեպի առանձնասենյակը) Կարծեմ, զարթնել է: Ի սեր աստծու, հեռացեք, նա ձեզ սառնարյուն տեսնել չի կարողանում: Նա կարծում է, որ դուք լարում եք ձեր աղջկան իր դեմ...

ՍՈԼՈՄՈՆ. Ես կգնամ Հերսիլեի մոտ: Ինչևէ, այսօր խնդիրը պետք է լուծվի... կամ այսպես, կամ այնպես:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Այնուամենայնիվ, աշխատացեք խաղաղությամբ լուծել խնդիրը... Նա իսկույն պիտի գնա Միզանդարովի պարտատերերի ժողովը: Նրա ներկայությունը այնտեղ անհրաժեշտ է: Հեռացեք, գալիս է կարծեմ... (Սոլոմոնն անցնում է Հերսիլեի բուդուարը):

ՏԵՍԻԼ 3

ԱՆՏՈՆ և ՄԱՐՄԱՐՅԱՆ

ԱՆՏՈՆ. (Ներս է մտնում առանձնասենյակից սյուրտուկի կռնակները կապելով) Դու այստե՞ղ ես... Հսկո՞ւմ ես ինձ դայակի պես...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ինչ արած, երբ դու քեզ երեխայի պես ես պահում:

ԱՆՏՈՆ. (Հանկարծ գրգռվելով) Ո՞վ է այնտեղ: Ես լսում եմ նրա անպիտան հոր ձայնը: Այդ մարդիկ, կարծես երդվել են ինձ խելքից հանելու: Ախ, ոչ, ես չեմ կարող համբերել նրա ներկայությունն իմ տանը (Քայլերն ուղղում է դեպի բուդուարը):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Առաջը կտրելով, ձեռքը բռնում է) Կաց... Եթե գոնե մազու չափ ինքդ քեզ հարգում ես, չպիտի ընդհարվես նրա ծնողների հետ: Այս խնդրում ոչ մի երրորդ անձ մեղավոր չէ...

ԱՆՏՈՆ. (Կանգ առնելով, ձեռքով շփում է ճակատը. ապա նայում է Մարմարյանին սուր հայացքով) Երրորդ անձ... Այո... (ավելի գրգռվելով): Բայց ես ինչ գիտեմ, դու ինչ գիտես, հիմար... Գուցե մեղավոր է մի երրորդ անձ: Ա՜խ, իրա՞վ, Իլիա, ի՞նչ ես կարծում, չկա՞ մի երրորդ անձ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Մեղք մի գործիր, Անտոն, դու գիտես, որ ոչ ոք չկա...

ԱՆՏՈՆ. (Սթափվելով) Այո գիտեմ, համոզված եմ... Չկա երրորդ անձ, չի կարող լինել... Հերսիլեն այն կանանցից չէ, բայց ինչո՞ւ... (Գրգռվում է նորից): Ինչո՞ւ է այդպես վարվում... Չէ՞ որ ես միևնույն Բեգմուրյանն եմ, չէ որ ես ոչնչով չեմ փոխվել... Ինչի՞ց առաջացավ այդ ատելությունը, այդ սարսափելի դրաման... Իլիա, ասա, ես փոխվե՞լ եմ, ես այժմ ուրի՞շ մարդ եմ... ծերացե՞լ եմ, այո, բանի պետք չե՞մ, լաթի կտո՞ր եմ, աղբի զամբյուղի՝ մեջ գցելու բա՞ն, այո...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Փոխվել է նա, իսկ դու չես փոխվել և չէիր կարող փոխվել... Եվ քո դժբախտությունն էլ հենց դրանումն է, որ չես կարող փոխվել, ուշ է...

ԱՆՏՈՆ. Բայց ես դուրս կկորզեմ նրա միջից այդ զգացմունքը... ես կոչնչացնեմ նրա մեջ... ես նրան խելքի կբերեմ... Ես... ես... (Կատաղի կրծոտում է ձեռքերը):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Կոպտությա՞մբ, կռվո՞վ, հայհոյանքներով ու ծեծո՞վ... Երբեք... Ընդհակառակը: Դու նրան ավելի կզզվեցնես և ավելի ինքդ քեզ կստորացնես թե նրա և թե ուրիշների աչքում...

ԱՆՏՈՆ. Ուրեմն, ցույց տուր միջոց կորցրած հարստությունս գտնելու:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Միակ միջոցը, իմ կարծիքով, նրան ազատություն տալն է:

ԱՆՏՈՆ. Բաժանվե՞լ: Երբեք, ամենևին... Դու խելագարվե՞լ ես, դու խոսում ես ինչպես հիմար ամուրի: Ես այդ մասին լսել անգամ չեմ ուզում: Նա իմն է եղել և կմնա, քանի որ ես կենդանի եմ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Ուժո՞վ, բռնությա՛մբ...

ԱՆՏՈՆ. Բռնությամբ, իրավունքներով, օրենքով, միևնույնն է, ես նրան երբեք ազատություն չեմ տալ: Երբեք թույլ չեմ տալ, որ անունս զուր տեղը բամբասանքի առարկա դարձնի... Նա իմն է և իմն էլ կմնա հավիտյան, որովհետև ես այդպես եմ ուզում... (Ներս է մտնում Սամսոնը և մի նամակ է տալիս Անտոնին):

ԱՆՏՈՆ. Ի՞նչ է այդ: (Բաց է անում նամակն արագ, կարդում է, դեն շպրտում: Սամսոնին): Ասա, որ ինձ չսպասեն. (Սամսոնը ուզում է գնալ):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Վերցնելով հատակից նամակը, Սամսոնին) Սպասիր. (Կարդում է նամակը, Անտոնին); Չի կարելի, Անտոն, դու պետք է անպատճառ գնաս այդ ժողովը: Երկու անգամ հետաձգել են քո պատճառով: Չէ՞ որ սնանկացած Միզանդարովի ամենամեծ պարտատերը դու ես, առանց քեզ չի կարելի մի բան որոշել: (Սամսոնին) Ասա, որ կգա իսկույն: (Սամսոնը գնում է): Դեհ, գնանք, ես քեզ կուղեկցեմ: Ես էլ ուզում եմ գնալ, և հրավեր եմ ստացել: Գնանք:

ԱՆՏՈՆ. Ես կկամենայի ամեն ինչ կորցնել և ընկնել հետին չքավորության մեջ, միայն թե սիրտս հանգիստ լինի: Գնանք, գնանք ես կատաղում եմ, լսելով այդ մարդու ձայնը: (Ձգում է ատելությամբ լի հայացք դեպի բուդուարը: Գնում է նախասենյակ Մարմարյանի հետ միասին):

ՏԵՍԻԼ 4

ՀԵՐՍԻԼԵ, ՍՈԼՈՄՈՆ և ՆԱՏԱԼԻՍ.

ՍՈԼՈՄՈՆ. (Ամենից առաջ մտնելով) Ո՞ւր է նա. ես ուզում եմ նրա հետ, վերջապես, խոսել: Ծեծել իմ աղջկա՞ն, իմ Հերսիլեի՞ն...

ՀԵՐՍԻԼԵ. Պապա, և ոչ մի խոսք: Ես խնդրում եմ չխառնվել մեր հարաբերությունների մեջ: Ես ինքս կմտածեմ և կորոշեմ իմ անելիքը:

ՆԱՏԱԼԻԱ. (Սաստիկ հուզված) Դու դուրս եկ, գնա քո բանին... Ի՞նչ քո գործն է: Քեզ նման մարդն իրավունք չունի ուրիշներին խրատելու:

ՍՈԼՈՄՈՆ, Իսկ քեզ նման կինն իրավունք չունի մոր դեր կատարելու: Դու անբախտացրիր իմ աղջկան, դու քո ագահությամբ ու փողասիրությամբ: Բեգմուրովը Հերսիլեի զույգը չէր:

ՀԵՐՍԻԼԵ. (Տանջանքով ու ձեռքերը ջարդելով) Ի սեր աստծո, ծնողներ, թողեք ինձ հանգիստ: Ախ, այս ի՞նչ անտանելի դրություն է:

ՍՈԼՈՄՈՆ. Ոչ, ես չեմ կարող այլևս սառնասիրտ մնալ: Դու ոտքի վրա դիակ ես դարձել: Դու այլևս այս տանը մնալ չես կարող: Վերցրու երեխաներիդ, գնանք իմ տունը...: Բաժանվիր այդ կոպիտ շինականից... Չի՞ տալ երեխաներին... թող չտա, դու եկ, ես երեխաներին էլ կխլեմ նրանից:

ՆԱՏԱԼԻԱ. Խելքդ աստված առել է, այ թե ինչ կարող եմ ասել: Ո՞ւմ ես տանում այստեղից, ո՞ւր: Ի՞նչ է պատահել, որ նա բաժանվի մարդուց: Վերջապես, ո՞վ կընդունի նրան իմ տունը: Դու կարծում ես, որ ես կարո՞ղ եմ այդպիսի խայտառակություն տանել: Մարդ է, տաքացել է, արյունը գլխովն է տվել, մի անգամ խփել է: Ինչ եղավ, աշխարհը հո չքանդվե՞ց: Հազար անգամ բախտավոր կլինեի, եթե դու էլ ինձ ծեծեիր, քան թե այնպես անպատվեիր: Հերսիլե, դուրս բեր գլխիցդ քամիները... Ականջ մի դնիր այդ կաչաղակին... Նա չգիտե, ինչ է ասում:

ՀԵՐՍԻԼԵ. Հանգստացիր, մամա, հանգստացիր դու էլ, պապա: Ես ինքս իմ գլխի հոգսը կտեսնեմ: Միայն դուք հեռացեք այստեղից, ինձ մենակ թողեք: Պապա, աղաչում եմ, հեռացիր: Ես ուզում եմ մենակ մնալ:

ՍՈԼՈՄՈՆ. (Բռնում է Հերսիլեի ձեռը. և նայում է նրան) Հերսիլե, լավ նայիր աչքերիս: Զգույշ, հասկանո՞ւմ ես, զգույշ, հիմար բաների մասին չմտածես...

ՀԵՐՍԻԼԵ. Ոչ, պապա, հանգիստ կաց, ես այնքան էլ թուլամորթ չեմ: Այդ երբեք չի չլինի հասկանո՞ւմ ես, երբեք պապա: Ես ապրել եմ ուզում և կապրեմ: Նա ֆիզիկական ուժ է գործ դնում, ես գործ կդնեմ բարոյական ուժ: Ես կապացուցանեմ նրան, որ կինն էլ կարող է ունենալ սեփական ձգտում և կամքի ուժ, որ կինն էլ կարող է փշրել իր շղթաները... Մամա, լաց մի լինիր, անցել է այլն ժամանակը, երբ կնոջ զենքը միայն արտասուքն էր: Դու այդ կտեսնես.... Թող ինչ ուզում են ասեն ուրիշները... Դեհ, հեռացիր, մամա...

ՍՈԼՈՄՈՆ. Գնանք, Հերսիլեն ինքը մեզանից լավ գիտե, թե ինչ է հարկավոր անել (Առանձին Նատալիային): Մենք կարող ենք հետո էլ գալ: Լսիր աղջիկս, ինչ էլ որ վճռես անելու, իմացիր, որ ես միշտ պատրաստ եմ քեզ պաշտպանել և օգնել...

ՀԵՐՍԻԼԵ. Շնորհակալ եմ, պապա... (համբուրում է նրան) Դու բարի ես:

ՆԱՏԱԼԻԱ. Իսկ ես մի՞թե չար եմ, աղջիկս: Ես մի՞թե ծնող չեմ: (Աչքերը սրբելով) Ինչ արած, եթե չես կարող ինքդ քեզ հաղթել, զզվանքդ սպանել, ճար չկա, իմ տունն էլ քոնն է: (Համբուրվում է Հերսիլեի հետ): Բայց ինչ էլ որ անես, լավ մտածիր, հետո արա: Լսո՞ւմ ես նրանց ձայնը: (Նշան է անում դեպի բուդուարի կողմը):

Հերսիլեն հեկեկանքը զսպելով, հարձակվում է մոր վրա և ջերմաջերմ համբուրում: Նատալիան Սոլոմոնի հետ գնում է դեպի նախասենյակ: Դռների մոտ Հերսիլեն մի անգամ ևս հարձակվելով նրանց վրա, համբուրում է և ապա մի քանի վայրկյան նայում է նրանց հետևից:

ՀԵՐՍԻԼԵ. (Մոտենում է լուսամատին, նայում է փողոց, հետ է դառնում) Գնացին: Խեղճ մարդիկ, եթե իմանայիք իմ հանցավոր միտքը... (Մոտենում է սեղանատան դռներին, նայում է ներս, հետո գալիս, նստում է գրասեղանի քով, արմունկները հենում սեղանին, ձեռներով

բռնում է գլուխը և ընկնում մտածողության մեջ, հետո ձեռով վճռական շարժում անելով, վերցնում է գրիչն ու գրում): Նախասենյակից լսվում է զանգակի ձայն: (Նա ցնցվում է, պատառոտում է նամակն ու գցում զամբյուղի մեջ, աշխատում է ուշքը ժողովել):

Ներս է մտնում Աննա Ալիմբարյանը, որ հագած է ճանապարհի հագուստ:

ՏԵՍԻԼ 5

ՀԵՐՍԻԼԵ և ԱՆՆԱ ԱԼԻՄԲԱՐՅԱՆ

ԱՆՆԱ. (Նայելով աջ ու ձախ, մոտենում է Հերսիլեին և համբուրվում) Խոստովանում եմ, դողալով եմ մտել այստեղ: Ամուսինդ, կարծես, ինձ իր ոխերիմ թշնամին է համարում: Բայց ինչպես գնայի առանց քեզ տեսնելու:

ՀԵՐՍԻԼԵ. Ուրեմն այսօր անպատճառ գնում եք է:

ԱՆՆԱ. Այո, առանց այն էլ շատ ուշացանք: Չգիտեմ այժմ կհաջողվի՞ ինձ, արդյոք, քննության տալ: Աստված իմ, այդ ինչ ես դարձել Հերսիլե: Հիվա՞նդ ես:

ՀԵՐՍԻԼԵ. (Աշխատելով անհոգ ժպտալ) Տարվա այս ժամանակին ես միշտ նիհարում եմ:

ԱՆՆԱ. Նիհարությունը չէ միայն, Հերսիլե, դեմքդ արտահայտում է անհուն վիշտ, տառապանք: (Մոտենալով բռնում է ձեռները) Հերսիլե, ես գիտեմ բոլորը, բոլորը գիտեմ: Դու անչափ դժբախտ ես:

ՀԵՐՍԻԼԵ. (Ձեռները խլելով և երեսը դարձնելով Աննայից) Կառախումբը ո՞ր ժամին է գնում:

ԱՆՆԱ. Իննից քառորդ անց: Ախ, չլինի թե ուշանամ: (Նայում է իր ժամացույցին) Ոչ, դեռ ութ ժամը չկա:

ՀԵՐՍԻԼԵ. (Մի վիատական շարժում անելով, մոտենում է սեղանատան դռներին, մատը սեղմում է զանգակի կոնակին, ներսից լսվում է զանգակի ձայն) Նստիր, Աննա, դեռ բավական ժամանակ ունես.... Աննան նստում է գրասեղանի քով, մի արմունկը հենում է սեղանին և, գլուխը դնելով ձեռի ափին, մռայլ հայացքը ձգում է անորոշ տարածության մեջ: Վիրժինեն ներս է մտնում սեղանատնից: Հերսիլեն դռների մոտ ինչ որ շշնջյունով պատվիրում է նրան: Վիրժինեն մի վայրկյան տարակուսանքով նայում է նրան, Հերսիլեն շտապեցնում է նրան: Վիրժինեն շտապով անցնում է բուդուար, ճանապարհին նայելով Աննային և ուսերը վեր քաշելով:

ԱՆՆԱ. (Գլուխը բարձրացնելով) Հերսիլե, եթե ինձ հյուրասիրելու պատրաստություն ես տեսնում, զուր է կուշանամ:

ՀԵՐՍԻԼԵ. (Տարօրինակ հուզված ձայնով, բայց աշխատելով իրեն զսպել) Այո, ես ուզում եմ քեզ հյուրասիրել, բայց ոչ այս տանը, այլ... Աննա, ես քեզ համար պատրաստում եմ մի սյուրպրիզ: Կզարմանաս գուցե, բայց չպիտի զայրանաս:

ԱՆՆԱ. Այդ ի՞նչ տարօրինակ խոսքեր են, Հերսիլե, և ինչ տարօրինակ եղանակով ես արտասանում: (Ոտքի կանգնելով, նորից բռնում է նրա ձեռներն իր ձեռների մեջ) Նայիր ինձ, ես աչքերիդ մեջ կարդում եմ ինչ-որ անսովոր վճռականություն: Հերսիլե, ամուսինդ քեզ դարձյալ վշտացրել է, ոչ, ոչ, վիրավորել է: Պատմիր, ի՞նչ է պատահել, Հերսիլե: (Ուզում է գրկել):

ՀԵՐՍԻԼԵ. (Ազատվելով նրա գրկից) Թող ինձ, գուցե ես արժանի չեմ, որ ինձ գրկի իմ ընկերուհին: (Մոտենում է լուսամուտին և նայում փողոց):

ԱՆՆԱ. Ոչինչ չեմ հասկանում: Քանի գնում այնքան ավելի անհասկանալի ես դառնում, Հերսիլե: Մի՞թե ինձանից գաղտնիք ունես: Չէ որ ես գիտեմ բոլորը, գիտեմ ինչ ծանր դրամա է կատարվում այժմ քո հոգում:

ՀԵՐՍԻԼԵ. Երբեք չես կարող երևակայել՝ ինչ ծանր դրամա է կատարվում իմ հոգում, երբեք, քանի որ դեռ մայր չես: (Քայլերն ուղղում է դեպի բուդուար, կես ճանապարհին կանգ է առնում):

ԱՆՆԱ. Այստեղ արտառոց կարգի մի բան է պատահել, կամ պիտի պատահի: Հերսիլե, մի տանջիր ինձ այդ մութ խոսքերով, ասա՛ պարզ: Դու բաժանվում ես նրանից:

ՀԵՐՍԻԼԵ. (Ինքն իրան) Երեխանե՛ր, Մի՞թե ես նրանց համար մայր եմ այժմ կամ երբևէ եղե՞լ եմ: Այն օրից, երբ հասկացել եմ, թե նրանց հետ բախտավոր չեմ, մայրական զգացումն ինձ համար դարձել է անտանելի տանջանք: Իհարկե, ես սիրել եմ նրանց, սիրել եմ ինչպես ամեն մի ֆիզիկական մայր, և ո՞ր կենդանին չի սիրում իր զավակներին: Բայց այդ սերը միշտ խմորված է եղել մի տեսակ խոզ ատելությամբ:

ԱՆՆԱ. (Զարմացած շարունակում է նայել նրան) Ատելությա՞մբ...

ՀԵՐՍԻԼԵ. Ոչ, ոչ, տանջանքով, անտանելի տանջանքով, երբ հիշել եմ, որ նրանք չսիրված մարդուց են, երբ մանավանդ նայել եմ նրանց դեմքերին և այնտեղ նշմարել որևէ նմանություն նրանց և այդ մարդու մեջ: Թող ինչ ուզում են ասեն մայրերն իմ մասին, բայց ես սեր չեմ համարում այն մայրական սերը, որ սրբագործված չէ ամուսնական սիրով: Չկա ավելի մեծ թշվառություն, քան տեսնել հարազատ զավակի մեջ սեփական սխալի մարմնացումը:

Իսկ այժմ... այժմ, երբ նայում եմ նրանց, սիրտս կտրատվում է վշտից, որ ես իսկական մայր չեմ, այլ ֆիզիկական ծնող, որ նրանք բարոյապես խորթ են ինձ համար: Եվ միթե դա հանցանք չէ, աա՞, Աննա, հանցա՞նք չէ: Եվ եթե հանցանք է, ինչո՞ւ կրկնել, ինչո՞ւ շարունակել ամեն օր: Ասա, ասա, Աննա, պետք է կրկնե՞լ, պետք է շարունակել:

ԱՆՆԱ, Հարցրու քո սրտից, քո հոգուց, սիրելիս: Այդ տեսակ հարցերի պատասխանը մարդ միայն իր մեջ պիտի փնտրի...

ՀԵՐՍԻԼԵ. Հարցնեմ հոգուցս: Ախ, ես շատ անգամ և երկար ժամանակ խորհրդակցել եմ հոգուս հետ և եկել եմ այն եզրակացության, որ երկու չարիքից պետք է ընտրել նսեմագույնը: Ես մայր եմ, այո, ուրեմն պարտավոր եմ կրթել իմ զավակներին: Բայց ի՞նչ կրթություն կարող է տալ իր զավակներին մի մայր, որ այդ զավակներին համարում է սեփական սխալի և թշվառության հետևանք: Ես աղավաղում եմ նրանց սիրտն ու հոգին և կլինեմ անբարոյական մայր, եթե շարունակեմ: Ոչ, ոչ, պետք է վերջ տալ այս կեղծիքին և ստությանը: Ես չունիմ իրավունք շարունակելու, ամենևին... Աննա, չունիմ իրավունք...

ԱՆՆԱ. Սիրելիս, անգինս ինչպե՞ս թողնեմ քեզ այդպիսի հուզված գրության մեջ և հեռանամ: Հանգստացիր հոգիս... (գրկում է):

ՀԵՐՍԻԼԵ. (Ազատվելով նրա գրկից) Մի վախենար իմ մասին և բոլորովին մի հոգար: Դու ինձ մինչև այսօր տեսել ես թույլ ու տկար, այժմ կտեսնես ուրիշ բան: Գնա, դու կարող ես ուշանալ: Ես ուզում եմ, որ դու այսօր գնաս, անպատճառ այսօր, հասկանում ես, հետո կարող է... ուշ լինել: Դեհ բարի ճանապարհ...

ԱՆՆԱ. Բայց դու ինձ սառն ես ճանապարհ դնում: Հերսիլե, դու ինչ-որ մտածում ես, ինչ-որ վճռում, քո դեմքի արտահայտությունն ինձ ապշեցնում է: Հերսիլե, հայտնիր ինձ քո դիտավորությունը:

ՀԵՐՍԻԼԵ. Կիմանաս, շուտով կիմանաս., ես կգրեմ... Հենց այսօր, իսկույն այս րոպեիս... Գնա, ես վախենում եմ, որ նա գա... Նա քեզ ատում է, նա քեզ է պատճառ համարում իմ փոփոխության: Նա կարող է քեզ վիրավորել..

ԱՆՆԱ. Մնաս բարով, սիրելիս... Ահա ինչ, Հերսիլե, ինչ էլ, որ վճռես անելու, իմացիր, որ իմ համակրությունը միշտ քո կողմն է, բացի մի դեպքից... Հասկանո՞ւմ ես, ինչ եմ ասում: Այդ գիտես, խնդրի հնացած տեսակի լուծումն է... Չպիտի թուլամորթ լինել...

ՀԵՐՍԻԼԵ. Ես երբեք թուլություն չեմ ցույց տալ:

ԱՆՆԱ. Ա՛ա, հասկացար միտքս ուրեմն, զգույշ և խոհեմ եղիր.

ՀԵՐՍԻԼԵ. (Դառն ծիծաղով) Զգույշ ու խոհեմ եղիր... Եվ այդ ասում ես դու, Աննա, դո՞ւ, որ իմ մեջ առաջացրիր այս հոգեկան հեղաշրջումը քո մտքերի ազատ թռիչքով…

ԱՆՆԱ. Դու հասկացար ինչ մտքով եմ ասում՝զգույշ եղիր:

ՀԵՐՍԻԼԵ. Այո, այո, հասկացա... Դեհ, գնա, հեռացիր, բարի ճանապարհ... Ոչ, ցտեսություն, շուտով կտեսնվենք... Գնա, որ նրան չհանդիպես... Համբուրվում են: Աննան համբուրում է նրան երկու, երեք անգամ, արագ-արագ և շտապում դուրս նախասենյակի դռներով:

ՏԵՍԻԼ 6

ՀԵՐՍԻԼԵ և ՎԻՐԺԻՆԵ

ՀԵՐՍԻԼԵ. (Ճանապարհ դնելով Աննային, մոտենամ է բուդարի դռներին) Վիրժինե...

ՎԻՐԺԻՆԵ. (Երևում է դռների մեջ) Պատրաստ է:

ՀԵՐՍԻԼԵ. Ասա Սամսոնին, որ մի կառք կանչի: Շուտ և ինչ որ պատրաստել ես տար փողոց: Սպասիր: Քնեցի՞ն: Վաղուց:

ՎԻՐԺԻՆԵ. Վաղուց են քնել:

ՀԵՐՍԻԼԵ, Շտապիր...

ՎԻՐԺԻՆԵ. (Անցնում է նախասենյակ):

ՀԵՐՍԻԼԵ. (Մնալով մի քանի վայրկյան անշարժ) Այո, այո, ուրիշ ելք չկա... Բոլոր ճանապարհները, բացի այս մեկից,անբարոյական են, բոլորը... (Թույլ, անվստահ, քայլերով անցնում է բուդուար):

ՎԻՐԺԻՆԵ. (Ներս է մտնում նախասենյակից, նա չափազանց հուզված է. աչքերով փնտրում է Հերսիլեին, հետո մոտենում է բուդուարի դռներին և ականջ է դնում) Կարծեմ լալիս է...

ՍԱՄՍՈՆ. (Ներս է մտնում նախասենյակից) Կառքը պատրաստ է:

ՎԻՐԺԻՆԵ. (Ցույց է տալիս նախասենյակի կողմը) Այնտեղ, դռների մոտ մի կապոց եմ դրել, տար, դիր կառքի վրա:

ՍԱՄՍՈՆ. (Գնում է):

ՀԵՐՍԻԼԵ. (Դուրս է գալիս բուդուարից գլխարկով, ձեռին մի փոքրիկ թղթե կապոց, մի քանի վայրկյան թուլացած կանգ է առնում դռների մոտ. հետո, ուշքը ժողովելով, վճռական շարժում է անում) Ապագան ինձ կարդարացնի, թող ներկան դատապարտի: Մոտեցիր, Վիրժինե...

ՎԻՐԺԻՆԵ. (Հարձակվում է, բռնում է Հերսիլեի ձեռը, սեղմում է իր շրթունքներին) Մենք չենք կարող առանց քեզ...

ՀԵՐՍԻԼԵ. (Արտասուքը դաղելով) Քեզ եմ հանձնում, Վիրժինե, (Համբուրում է և շտապով մոտենում գրասեղանին, գրիչ վերցնում, արագ-արագ մի քանի տող ցրում, ծրարում է, և. ծրարը թողնում սեղանի վրա):

ՎԻՐԺԻՆԵ. (Լուռ արտասվելով, աչքերով հետևում է նրան) Մենք ի՞նչ պիտի անենք...

ՀԵՐՍԻԼԵ. Չպիտի թուլասիրտ լինել... (Մի անգամ ևս համբուվում է Վիրժինեի հետ և շտապով անցնում նախասենյակ):

ՎԻՐԺԻՆԵ. (Աչքերը սրբելով, հետևում է նրան, փոքր ժամանակ բեմը մնում է դատարկ, հետ է գալիս նախասենյակից, մոտենում է լուսամուտին, թեքվում, նայում ու հետ դառնում) Գնաց: Ինչո՞ւ արավ այդ բանը, տեր աստված... (Ուզում է գնալ բուդուար. նախասենյակից լսելով զանգակի ձայնը, ցնցվում է և մնում անշարժ, հետո շտապով անցնում է բուդուար):

ՏԵՍԻԼ 7

ԱՆՏՈՆ, ՄԱՐՄԱՐՅԱՆ, հետո ՎԻՐԺԻՆԵ, ՆԱՏԱԼԻԱ Ա և ՍՈԼՈՄՈՆ ՄԱՐՄԱՐՅԱՆ

(Անտոնի հետ նախասենյակից ներս մտնելով) Այդ ինչ վարմունք էր, ինչ երեխայություն: Թողնել նիստը ամենահետաքրքրական րոպեին և հեռանալ, այն էլ այնպես հանկարծակի: Նախագահին հարց ես տալիս: Նա ուզում է պատասխանել: Դու խոսքը կիսատ ես թողնում և հանկարծ դուրս գալիս: Այդ ուղղակի խելագարի վարմունք էր: Ցնորվել ես: Բոլորը ուշադրություն դարձրին քեզ վրա և սկսեցին քչփչալ...

ԱՆՏՈՆ. Թքել եմ բոլորի վրա: Թող ինձ համարեն խելագար: Ինձ քաշում էր այստեղ մի չար նախազգացում, Իլիա, նայիր, ականջ դիր, այնտեղ ոչ ոք չկա...

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Մի տանջիր քեզ հիմար կասկածներով, Անտոն, Հերսիլեն, երբեք թույլ չի տալ... (Կամաց-կամաց առաջ գալով, մոտենում է գրասեղանին):

ԱՆՏՈՆ (Դեպի բուդուար). Վիրժինե... Ո՞վ կա այդտեղ: (Ականջ է դնում) Ձայն չի լսվում: Սամսոնի դեմքը շատ կասկածելի էր:

ՎԻՐԺԻՆԵ. (Դուրս է գալիս բուդուարից և կանգնում դռների մոտ, գլուխը մեղապարտի պես կրծքին թեքելով): Ո՞վ կա այդտեղ: Սուրաթյանները գնացի՞ն:

ՎԻՐԺԻՆԵ. (Չի պատասխանում):

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (Նկատում է նամակը սեղանի վրա, վերցնում է) Այս ի՞նչ է: Նամակ քո անունով:

ԱՆՏՈՆ. (Խլելով նամակը, շտապով բաց է անում ու կարդում) Այդ արդեն ես չէի սպասում: (Տալիս է նամակը Մարմարյանին, գունաթափվելով) Կարդա:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. «Եթե մնայի քո տանը, կլինեի անբարոյական կին և վատ մայր: Թող ինձ համարեն անգութ ծնող, բայց կեղծել ու ստել չէի կարող: Մանրամասնությունները ճանապարհից»: (Նամակը կարդալուց մի քանի վայրկյան առաջ, ներս են մտել Նատալիան և Սոլոմոնն այնպես, որ նրանք լսում են): Արծիվը խորտակեց վանդակն ու թռավ:

ԱՆՏՈՆ. Որպեսզի քաղցած սատկի…

ՍՈԼՈՄՈՆ. Ոչ, ես նրան քաղցած չեմ թողնի…

ԱՆՏՈՆ (Նատալիային). Ուրախացեք, ձեր աղջիկը հերոսուհի դարձավ: (Դառն հեկեկալով ընկնում է բազկաթոռի վրա):

ՆԱՏԱԼԻԱ. (Ամոթահար երեսը ծածկում է):